Հավելված
ՀՀ կառավարության 2022 թվականի
դեկտեմբերի 22-ի N 2016-Ն որոշման

«Հավելված N 1
ՀՀ կառավարության 2018 թվականի
ապրիլի 12-ի N 405-Ն որոշման

# ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ, ՀԵՏԱԶՈՏՈՒՄ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԵԳՐՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ, ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգի համաձայն՝ բժշկական հսկողության, հաշվառման, հետազոտության և բժշկական (այսուհետ՝ ռազմաբժշկական) փորձաքննության ենթակա են զինվորական հաշվառմանը նախապատրաստելու և զինվորական հաշվառման ենթակա (նախազորակոչային տարիքի՝ 14-18 տարեկան), պարտադիր զինվորական ծառայության շարքային և սպայական կազմերի զորակոչերի ենթակա (18-27 (35) տարեկան (այսուհետ՝ զորակոչային)՝ ներառյալ պարտադիր զինվորական ծառայությունից առողջական վիճակի պատճառով վաղաժամկետ զորացրված և 27 (35) տարին չլրացած), 27 տարեկանից բարձր տարիք ունեցող և զինվորական ծառայություն չանցած, ինչպես նաև պահեստազորում հաշվառված (հաշվառվող) քաղաքացիները և զինվորական ծառայության մեջ գտնվող անձինք (այսուհետ՝ նաև զինապարտներ և զինծառայողներ), իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև զինծառայողներին հավասարեցված անձինք:

2. Զինապարտների և զինծառայողների (նրանց հավասարեցված անձանց) առողջական վիճակի հետազոտման և ռազմաբժշկական փորձաքննության նպատակն է որոշել՝

1) զինվորական հաշվառման, զորակոչի (ներառյալ զորահավաքային զորակոչի), զինվորական (կամ հավասարեցված) ծառայության անցնելու, պահեստազորային պատրաստության շրջանակներում պարտականությունների կատարման ժամանակ քաղաքացիների պիտանիությունը զինվորական ծառայությանը.

2) սպայական և ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողների, ՌՈՒՀ-երի (բուհերի) դիմորդների, կուրսանտների և ունկնդիրների, պարտադիր և պայմանագրային զինծառայության շարքային կազմերի պիտանիությունը զինվորական ծառայությանը.

3) ռադիոակտիվ նյութերով, իոնացնող ճառագայթման այլ աղբյուրներով, հրթիռային վառելիքի բաղադրամասերով, էլեկտրամագնիսական դաշտ ստեղծող սարքավորումներով աշխատելու համար անձանց պիտանիությունը.

4) զինծառայողների, ՀՀ սահմանների պաշտպանությանը մասնակցած անձանց ստացած վնասվածքների և հիվանդությունների՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապը.

5) Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների, ԽՍՀՄ նախկին զինծառայողների, Չեռնոբիլի ատոմակայանի վթարի հետևանքների վերացման մասնակիցների ստացած վնասվածքների և հիվանդությունների հետևանքների՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապը:

3. Փորձաքննությունն իրականացնում են իրավասու հանձնաժողովները, որոնք եզրակացություններն ընդունում են զինվորական ծառայության համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշմամբ հաստատված՝ քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկի (այսուհետ՝ ցանկ), քաղաքացիների և զինծառայողների բժշկաթռիչքային պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկի և քաղաքացու կամ զինծառայողի առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանների (այսուհետ՝ պայմանների) համաձայն:

4. Սույն կարգում օգտագործվում են հետևյալ հապավումները՝

ԶՈՒ՝ զինված ուժեր,

ԿՌԲՀ՝ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողով,

ԿՌԲՓԿ՝ կենտրոնական ռազմաբժշկական փորձաքննական կենտրոն,

ՀՌԲՀ՝ հոսպիտալային ռազմաբժշկական հանձնաժողով,

ԿԿԶՀ ԲԹՓՀ՝ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալի բժշկաթռիչքային փորձաքննության հանձնաժողով,

ԿՊ ՌԲՀ՝ կենտրոնական պոլիկլինիկայի ռազմաբժշկական հանձնաժողով,

ՌՈՒՀ՝ ռազմաուսումնական հաստատություն,

ԿԲՀ՝ կենտրոնական բժշկական հանձնաժողով,

ՀՀՌԲՀ՝ Հանրապետական հավաքակայանի ռազմաբժշկական հանձնաժողով,

ԶԿԲՀ՝ ՀՀ զինվորական կոմիսարիատների (այսուհետ՝ զինվորական կոմիսարիատ) բժշկական հանձնաժողով,

ՌԲՎ՝ ռազմաբժշկական վարչություն,

ՌՆ՝ ռադիոակտիվ նյութեր,

ԻՃ՝ իոնացնող ճառագայթում,

ԷՄԴ՝ էլեկտրամագնիսական դաշտ,

ՀՎԲՄ՝ հրթիռային վառելիքի բաղադրիչ մասեր,

ԷՍԳ՝ էլեկտրասրտագրություն,

ԷԷԳ՝ էլեկտրաէնցեֆալոգիր,

ԿՆՀ՝ կենտրոնական նյարդային համակարգ,

ԱՇՖ՝ արտաքին շնչառական ֆունկցիա,

ԶՃ՝ զարկերակային ճնշում,

ՀՏ՝ համակարգչային տոմոգրաֆիա:

5. Զինվորական հաշվառման ենթակա, ինչպես նաև սահմանված ժամկետում հաշվառման չկանգնած զորակոչային տարիքի քաղաքացիները, պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի զորակոչի ենթակա քաղաքացիները, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն պարտադիր զինվորական ծառայությունից ազատված և պահեստազորում հաշվառված, ինչպես նաև զինվորական ծառայության ընթացքում առողջական վիճակի պատճառով ոչ պիտանի ճանաչված և նույն օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն շարքային կազմի պարտադիր

զինվորական ծառայությունից արձակված և պահեստազորում հաշվառված քաղաքացիները, ՌՈՒՀ-երում (բուհերում) ուսանելու համար ոչ պիտանի ճանաչված կուրսանտները (սպայական կոչում չունեցող ունկնդիրները, ուսանողները) փորձաքննվում են համաձայն ցանկի I սյունակի:

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչված շարքային կազմի զինծառայողները փորձաքննվում են համաձայն ցանկի II սյունակի:

ՌՈՒՀ-երում ուսանելու, Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ սովորելու և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից նշված վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր) կնքելու համար դիմած քաղաքացիները փորձաքննվում են համաձայն ցանկի III սյունակի:

Պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի համաձայն պարտադիր զինվորական ծառայությունից ազատված և պահեստազորում հաշվառված, ինչպես նաև զինվորական ծառայության ընթացքում առողջական վիճակի պատճառով ոչ պիտանի ճանաչված և նույն օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունից արձակված և պահեստազորում հաշվառված քաղաքացիները փորձաքննվում են ցանկի IV սյունակով:

Բոլոր կազմերի պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու համար դիմած քաղաքացիները, բոլոր կազմերի պայմանագրային զինծառայողները, պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զինծառայողները, ՌՈՒՀ-երի կուրսանտները (բուհերի սպայական կոչում չունեցող

ունկնդիրները, ուսանողները), Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ սովորողները, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից նշված վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր) կնքած քաղաքացիները, ինչպես նաև վարժական հավաքների ներգրավվող, զորահավաքային զորակոչի ենթակա քաղաքացիները փորձաքննվում են համաձայն ցանկի V սյունակի:

ՌԽՆ, ԻՃ այլ աղբյուրների, ՀՎԲՄ, ԷՄԴ ստեղծող սարքերի հետ աշխատող զինծառայողները և այդպիսի աշխատանքի ընդունվողները փորձաքննվում են համաձայն ցանկի VI սյունակի:

6. ՌՈՒՀ-երում ուսանելու համար ոչ պիտանի ճանաչված և 18 տարեկանը լրացած կուրսանտների՝ հետագա զինվորական ծառայության համար պիտանիության վերաբերյալ եզրակացություն իրավասու հանձնաժողովը տալիս է նաև համաձայն ցանկի II սյունակի: 18 տարեկանը չլրացած կուրսանտները, ինչպես նաև 18 տարեկանը լրացած բուհերի սպայական կոչում չունեցող ունկնդիրները, ուսանողները, պայմանագիր կնքած քաղաքացիները ՌՈՒՀ-երում ուսանելու համար ոչ պիտանի ճանաչվելու դեպքում իրավասու հանձնաժողովի կողմից փորձաքննվում են համաձայն ցանկի I սյունակի:

7. ՌԽՆ, ԻՃ այլ աղբյուրներով, ՀՎԲՄ, ԷՄԴ ստեղծող սարքերով աշխատողներ պատրաստող ՌՈՒՀ-երում դիմորդները փորձաքննության են ենթարկվում նաև ցանկի VI սյունակի համաձայն:

8. Զորահավաքային զորակոչի ենթակա քաղաքացիների առողջական վիճակի հետազոտումը և բժշկական փորձաքննությունն իրականացվում են սույն

կարգով պահեստազորային պատրաստության շրջանակներում անցկացվող միջոցառումներին ներգրավվող քաղաքացիների համար սահմանված ծավալով և պայմաններով:

9. ՌՆ, ԻՃ այլ աղբյուրներով, ՀՎԲՄ, ԷՄԴ ստեղծող սարքերով աշխատելու համար ծառայությանը ոչ պիտանի ճանաչված զինծառայողների վերաբերյալ ԿՌԲՓԿ-ն միաժամանակ եզրակացություն է ներկայացնում զինվորական ծառայության համար նրանց պիտանիության մասին՝ ցանկի II կամ V սյունակների համաձայն:

ՌՆ, ԻՃ այլ աղբյուրներով, ՀՎԲՄ, ԷՄԴ ստեղծող սարքերով աշխատանքի նշանակվող զինծառայողները VI սյունակով փորձաքննության են ենթարկվում միայն այն դեպքում, եթե նրանք, ըստ զինվորական կոչման, զորատեսակի, պիտանի են ցանկի II կամ V սյունակներով:

10. Վեց ամսից պակաս տևողությամբ դասընթացների (այդ թվում՝ սպաների պատրաստման և վերապատրաստման) ուղարկվողները ռազմաբժշկական փորձաքննության չեն ենթարկվում:

11. Կին զինծառայողները (զինապարտները) փորձաքննության են ենթարկվում ընդհանուր հիմունքներով՝ գինեկոլոգի պարտադիր մասնակցությամբ:

12. Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման առողջապահական պետական նպատակային ամենամյա ծրագրերին համապատասխան՝ նախազորակոչային ու զորակոչային տարիքի արական սեռի քաղաքացիների անվճար հիվանդանոցային բուժման ուղեգրումն իրականացվում է սույն կարգի 28-րդ կետի համաձայն:

13. Ամբուլատոր պոլիկլինիկական հաստատություններում, բժշկական կազմակերպություններում և ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնող մարմիններում հետազոտվողների (փորձաքննվողների) առողջական վիճակի գնահատումն իրականացվում է սահմանված չափորոշիչների համաձայն:

## II. ԶԻՆԱՊԱՐՏՆԵՐԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ, ԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ, ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

14. Զինապարտների բժշկական փորձաքննություն իրականացնող մարմիններն են՝

1) զինվորական կոմիսարիատների բժշկական հանձնաժողովները (արտահաստիքային).

2) կենտրոնական բժշկական հանձնաժողովը (արտահաստիքային).

3) ՌՈՒՀ-երի ընդունելության ռազմաբժշկական հանձնաժողովը (արտահաստիքային):

15. Հայտարարված զորակոչերի ընթացքում հանրապետական հավաքակայանի ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից իրականացվում է քաղաքացիների առողջական վիճակի և բժշկական փաստաթղթերի ուսումնասիրություն:

### 1. ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ (ԶԿԲՀ)

16. Զինվորական կոմիսարիատի բժշկական հանձնաժողովը, համապատասխան զինվորական կոմիսարի առաջարկությամբ և մարզպետի (Երևանի քաղաքապետի) ներկայացմամբ, կազմավորվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով՝ մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 5-ը և գործում է ողջ տարվա ընթացքում: Նույն կարգով է իրականացվում հանձնաժողովի կազմում անդամի փոփոխությունը: ԶԿԲՀ-ի կազմում ընդգրկվում են զինվորական կոմիսարիատի բժիշկը (նախագահ), անդամները՝ թերապևտ, սրտաբան, վիրաբույժ, վնասվածքաբան, նյարդաբան, հոգեբույժ, ակնաբույժ, օտոլարինգոլոգ, մաշկաբան, ինչպես նաև հանձնաժողովի քարտուղարը: ԶԿԲՀ-ի աշխատանքներն արձանագրվում են մատյանում, որի լրացման համար պատասխանատու է հանձնաժողովի քարտուղարը: ԶԿԲՀ-ի արձանագրությունների մատյանը պահպանվում է զինվորական կոմիսարիատում: ԶԿԲՀ-ի գործառույթներն են՝

1) նախազորակոչային և զորակոչային տարիքի զինապարտներին զինվորական հաշվառման, զորակոչի, զինված ուժերի համար մասնագետների պատրաստության և ՌՈՒՀ-երի թեկնածուների ընտրության ժամանակ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր կնքելու ցանկություն հայտնած անձանց փորձաքննության ենթարկելը.

2) պահեստազորում հաշվառվող զինապարտներին զինվորական հաշվառման վերցնելիս, իսկ պահեստազորում հաշվառվածներին՝ օրենքով սահմանված դեպքերում վերափորձաքննություն անցնելու, պայմանագրային զինվորական ծառայության ներգրավելիս, զորահավաքային զորակոչի կամ պահեստազորային պատրաստության միջոցառումներին ներգրավելու ժամանակ փորձաքննության ենթարկելը.

3) նախնական և անհրաժեշտ այլ հետազոտությունների ուղեգրման անհրաժեշտության վերաբերյալ զինվորական կոմիսարին եզրակացություն ներկայացնելը.

4) զինապարտների պիտանիության վերաբերյալ եզրակացություն կայացնելը.

5) նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց կանխարգելիչ պատվաստումների ամբողջականության և լիարժեքության գնահատումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված Պատվաստումների ազգային օրացույցի համաձայն.

6) փորձաքննությունների արդյունքներն ամփոփելը և դրա մասին զինվորական կոմիսարին ներկայացնելը:

## 2. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ (ԿԲՀ)

17. ԿԲՀ-ն բժշկական փորձաքննության արտահաստիքային մարմին է, որի անհատական կազմը հաստատվում է պարտադիր զինվորական ծառայության հերթական զորակոչը հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության

կառավարության համապատասխան որոշմամբ՝ պաշտպանության նախարարի առաջարկով: ԿԲՀ-ի կազմում ընդգրկվում են հանձնաժողովի նախագահը և տեղակալը՝ ՀՀ պաշտպանության և առողջապահության նախարարությունների ներկայացուցիչներ, ավագ բժիշկը՝ ՀՀ ԶԿ գլխավոր բժիշկը (ըստ անհրաժեշտության), անդամները՝ թերապևտ, սրտաբան, վիրաբույժ, վնասվածքաբան, նյարդաբան, հոգեբույժ, ակնաբույժ, մաշկաբան, օտոլարինգոլոգ, ինչպես նաև համակարգչային օպերատոր ու քարտուղար: ԿԲՀ-ն զինապարտների բժշկական փորձաքննության ղեկավար մարմին է և հաշվետու է ՀՀ պաշտպանության նախարարին: ԿԲՀ-ի անդամ չի կարող նշանակվել սույն կարգի 16-րդ և 82-րդ կետերով սահմանված հանձնաժողովների անդամ հանդիսացող անձը: ԿԲՀ-ի աշխատանքներն արձանագրվում են, որի լրացման համար պատասխանատու է հանձնաժողովի քարտուղարը: ԿԲՀ-ի արձանագրությունները պահպանվում են ՀՀ զինվորական կոմիսարիատում: ԿԲՀ-ի գործառույթներն են՝

1) ԶԿԲՀ-ների կողմից բժշկական փորձաքննություն անցած շարքային և պահեստազորի սպայական կազմերի պարտադիր զինվորական ծառայության զորակոչվողների վերաբերյալ եզրակացություն կայացնելը, այդ թվում նաև զինվորական ծառայության չծառայած ժամկետն ուղարկելուն ենթակա քաղաքացիներին բժշկական փորձաքննության արդյունքներով.

2) բավարար հիմքերի առկայության դեպքում հայտարարված զորակոչի ընթացքում իր կողմից կայացված եզրակացությունները վերանայելը:

18. Քաղաքացիների պիտանիության վերաբերյալ ԿԲՀ-ի եզրակացությունները վերջնական են և կարող են բողոքարկվել երկամսյա ժամկետում ՀՀ պաշտպանության նախարարին կամ դատական կարգով:

## 3. ՌԱԶՄԱՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

19. Ռազմաուսումնական հաստատությունների ընդունելության ռազմաբժշկական հանձնաժողովը (այսուհետ՝ ՌՈՒՀ ՌԲՀ) արտահաստիքային մարմին է, որը կազմավորվում է ըստ անհրաժեշտության՝ հիմք ընդունելով ՌՈՒՀ-երի ընդունելությունը

կազմակերպելու և անցկացնելու վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարի հրամանը: ՌՈՒՀ ՌԲՀ-ի կազմը սահմանվում է ՀՀ ԶՈՒ-ի ռազմաբժշկական վարչության պետի հրամանով, որպես կանոն հետևյալ կազմով. նախագահ, անդամներ՝ թերապևտ, վիրաբույժ, վնասվածքաբան, ատամնաբույժ, նյարդաբան, հոգեբույժ, ակնաբույժ, մաշկաբան, քիթ-կոկորդ-ականջաբան, հոգեբան և քարտուղար: Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել նաև այլ մասնագետներ:

20. ՌՈՒՀ-երի ընդունելության ռազմաբժշկական հանձնաժողովի գործառույթներն են՝

1) ռազմաուսումնական հաստատություններ ընդունվողների ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնելը.

2) ՌՈՒՀ ընդունվողների փորձաքննության արդյունքներն ամփոփելը և ընդունելության հանձնաժողովի նախագահին և ըստ վերադասության հաշվետվություն ներկայացնելը:

## 4. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆԻ ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ (ՀՀՌԲՀ)

21. ՀՀ ՊՆ հանրապետական հավաքակայանի ռազմաբժշկական հանձնաժողովն արտահաստիքային մարմին է, որը կազմավորվում է պաշտպանության նախարարի հրամանով՝ ՀՀ ԶՈՒ ՌԲՎ պետի ներկայացմամբ, և գործում է յուրաքանչյուր հայտարարված զորակոչի ընթացքում: Նրա կազմում ընդգրկվում են հանձնաժողովի նախագահը, տեղակալը, բժիշկ-մասնագետները՝ թերապևտ, սրտաբան, վիրաբույժ, վնասվածքաբան, նյարդաբան, հոգեբույժ, ակնաբույժ, մաշկաբան, օտոլարինգոլոգ, ռենտգենոլոգ, ֆթիզիատր, հոգեբան, ինչպես նաև բուժքույրեր և ռենտգեն տեխնիկներ:

ՀՀՌԲՀ-ում իրականացվում են հանրապետական հավաքակայան ներկայացված զորակոչիկների անձնական գործերի, բժշկական փաստաթղթերի ուսումնասիրում, արտաքին մարմնազննում, ջերմաչափում, գանգատների, ակնառու հիվանդությունների և վնասվածքների, պատվաստումների հակացուցումների

հայտնաբերում: Բոլոր զորակոչիկներին պարտադիր կատարվում է ֆլյուորոգրաֆիկ հետազոտություն:

Հավաքակայան ներկայացված քաղաքացու առողջական վիճակի վերաբերյալ փաստաթղթերի և/կամ տեղեկությունների ոչ լիարժեք լինելու կամ քաղաքացու առողջական վիճակը զորակոչվելու համար խոչընդոտ հանդիսանալու դեպքում հանձնաժողովը քաղաքացուն զինվորական կոմիսարիատ վերադարձնելու նպատակահարմարության վերաբերյալ համապատասխան եզրակացություն է ներկայացնում հանրապետական հավաքակայանում զինվորական կոմիսարիատների աշխատանքները համակարգողին:

22. Կատարված աշխատանքների վերաբերյալ ՀՀՌԲՀ նախագահը ներկայացնում է ամենօրյա զեկույց ՀՀ ԶՈՒ ՌԲՎ պետին, իսկ զորակոչի ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հաշվետվություն՝ ՀՀ պաշտպանության նախարարին զեկուցելու նպատակով:

## 5. ԶԻՆԱՊԱՐՏՆԵՐԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

23. Հիվանդանոցային բուժհետազոտում իրականացնող բժշկական կազմակերպությունների տնօրենները և համապատասխան հանձնաժողովների նախագահները, ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպությունների տնօրեններն իրենց իրավասությունների սահմաններում ապահովում են նախազորակոչային և զորակոչային տարիքի արական սեռի քաղաքացիների առողջական վիճակի գնահատման, բժշկական հետազոտության իրականացման, բժշկական օգնության ու սպասարկման կազմակերպման գործընթացը:

Հիվանդանոցային բուժհետազոտում իրականացնող բժշկական կազմակերպությունների հանձնաժողովները, համապատասխան բժշկական կազմակերպության ներկայացմամբ, կազմավորվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով՝ մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 5-ը, և գործում են ողջ տարվա ընթացքում: Նույն կարգով է իրականացվում հանձնաժողովի կազմում անդամի փոփոխությունը:

24. Ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպությունները (բուժմիավորումների ամբուլատոր-պոլիկլինիկական ստորաբաժանումները) 14-15 տարեկան արական սեռի քաղաքացիներին վերցնում են բժշկական հաշվառման՝ նախազորակոչային տարիքի քաղաքացիների հետազոտությունների ծավալներին համապատասխան: Ամբուլատոր քարտերի գրառումների հիման վրա մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 15-ը վերը նշված կազմակերպությունների կողմից կազմվում են հաջորդ տարվա ընթացքում 16 տարին լրացող նախազորակոչիկների առողջության անձնագրեր (համաձայն N 1 ձևի), որոնք ոչ ուշ, քան 15-օրյա ժամկետում, ներառյալ էլեկտրոնային առողջապահության ԱՐՄԵԴ համակարգի միջոցով, ուղարկվում են քաղաքացու հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ, իսկ հաշվառում չունեցող քաղաքացիների դեպքում՝ ՀՀ զինվորական կոմիսարիատ:

25. Նախազորակոչիկների ու զորակոչիկների բուժսպասարկման համար առանձնացված առաջնային օղակի մասնագետը (տեղամասային թերապևտ, ընտանեկան բժիշկ, մանկաբույժ) իր կողմից հաշվառման վերցված քաղաքացիների պարբերական բժշկական հետազոտությունն իրականացնում է համաձայն պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման առողջապահական պետական նպատակային ամենամյա ծրագրերին համապատասխան:

26. Զինվորական կոմիսարիատների կողմից տրամադրված անվանացուցակների հիման վրա ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպությունները կազմակերպում են զինվորական հաշվառման, պարտադիր զինվորական ծառայության զորակոչի, ինչպես նաև սույն կարգի 65-րդ և 71-րդ կետերում նշված պահեստազորում հաշվառված հետազոտության ենթակա քաղաքացիների անհրաժեշտ լաբորատոր և գործիքային հետազոտությունները և դրանց արդյունքների վերաբերյալ տվյալներն ու փաստաթղթերը, ինչպես նաև զորակոչիկների բժշկական քարտերից քաղվածքները 3 աշխատանքային օրվա ընթացքում, ներառյալ էլեկտրոնային առողջապահության ԱՐՄԵԴ համակարգի միջոցով, ներկայացնում են համապատասխան զինվորական կոմիսարիատ:

27. Նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց հիվանդանոցային հետազոտության ավարտից հետո՝ տուբերկուլոզի հայտնաբերման դեպքում կազմակերպվում է տեղեկատվության անհապաղ փոխանցում համապատասխան զինվորական կոմիսարիատ՝ նրանց հետագա հաշվառման և վերահսկողության կազմակերպման նպատակով Հայաստանի Հանրապետության պոլիկլինիկա-ներում ստեղծված տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետներում:

28. Նախազորակոչային և զորակոչային տարիքի քաղաքացիների զինվո-րական հաշվառումից հետո մինչև նրանց զորակոչը, ինչպես նաև զորակոչերի միջև ընկած ժամանակահատվածում օրենքով սահմանված տարբեր հիմքերով տարկետում ստացած քաղաքացիների հիվանդանոցային կամ ամբուլատոր բուժման (բացառությամբ անհետաձգելի վիճակների) գործընթացն իրականաց-վում է զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատի կամ ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպության կողմից տրված ուղեգրով: Ընդ որում, ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպության կողմից ուղեգրի տրամադրումը նախապես գրավոր համաձայնեցվում է զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատի հետ: Հայտարարված զորակոչի ընթացքում տվյալ զորակոչին ենթակա քաղաքացիների ուղեգրումն իրականացվում է միայն զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատի կողմից: Ուղեգիրը վավեր է 10 աշխատանքային օրվա ընթացքում: Ուղեգրումը կարող է իրակա-նացվել նաև էլեկտրոնային առողջապահության ԱՐՄԵԴ համակարգի միջոցով:

29. Բժշկական հետազոտություն իրականացնող բժշկական կազմակերպու-թյունում համապատասխան նեղ մասնագետի բացակայության դեպքում նեղ մասնագիտական կոնսուլտացիան (կամ հետազոտությունը) այլ բժշկական կազ-մակերպության կողմից ապահովվում է համաձայն բժշկական կազմակերպու-թյունների միջև կնքված երկկողմանի պայմանագրի:

30. Զորակոչային տարիքի անձանց մոտ անհետաձգելի վիճակների բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման անհրաժեշտության դեպքում (փաս-տացի տեղափոխված ու բուժհաստատություն ընդունված) կատարված բժշկական

օգնության և սպասարկման մասին բժշկական օգնություն և սպասարկում իրականացրած բուժհաստատությունը 48 ժամվա ընթացքում դրա մասին գրավոր տեղեկացնում է համապատասխան զինվորական կոմիսարին, իսկ զինվորական հաշվառման չվերցված քաղաքացիների դեպքում՝ ՀՀ զինվորական կոմիսարին:

31. Հայաստանի Հանրապետության մարզերում բնակվող նախազորակոչային և զորակոչային տարիքի արական սեռի քաղաքացիների առողջական վիճակի հետազոտությունը, ինչպես նաև հիվանդանոցային բուժումը համապատասխան բժշկական սարքավորումների և մասնագետների առկայության պայմաններում կազմակերպվում է տվյալ տարածքում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող մարզային բժշկական կազմակերպություններում:

32. Քաղաքացու հետազոտումը և բուժումը հիվանդանոցային պայմաններում իրականացվում են՝

1) ցնցումային սինդրոմի, հոգեկան և պարբերական հիվանդության ու էնուրեզի առկայության կասկածի դեպքում.

2) երբ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող մարզային բժշկական կազմակերպության տեղակայման քաղաքը դուրս է նախազորակոչային և զորակոչային տարիքի անձի բնակության վայրից և Հայաստանի Հանրապետության մարզերից Երևան քաղաք ուղեգրման ժամանակ (զինապարտների համաձայնությամբ).

3) երբ կա բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ներկայացված գրավոր հիմնավորումը՝ ցերեկային ստացիոնարի պայմաններում բժշկական հետազոտությունների անցկացման դժվարության մասին:

33. Հետազոտում և բուժում իրականացնող բժշկական կազմակերպության և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության միջև պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հատուկ և դժվարամատչելի, ինչպես նաև անհրաժեշտ այլ

հետազոտություններ իրականացնելու համար պայմանագրի և համապատասխան բժշկական ցուցումների առկայության դեպքում (կամ հաստատված լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների պարտադիր ծավալների ապահովման նպատակով) բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունը տվյալ հետազոտությունն իրականացնում է ներհիվանդանոցային ուղեգրմամբ, որի համար առանձին ֆինանսական փոխհատուցում է տրամադրվում:

Նման կարգով անհրաժեշտ հետազոտությունն իրականացնելու հնարավորության բացակայության դեպքում հետազոտական ակտի մեջ համապատասխան խորհրդատվության կամ դրա անհրաժեշտության վերաբերյալ կարծիքի հետ միասին բժշկական հաստատության կողմից զինվորական կոմիսարին տրամադրվում են նաև նշված խորհրդատվության համար հիմք հանդիսացած բժշկական փաստաթղթերի հաստատված պատճենները:

34. Զինապարտների հետազոտման արդյունքները քաղաքացիական և զինվորական բժշկական կազմակերպությունում ձևակերպվում են առողջական վիճակի հետազոտման ակտով:

Հետազոտությունն ավարտելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում բժշկական կազմակերպությունում լրացվում է զինապարտի առողջական վիճակի հետազոտման ակտ՝ թղթային կամ էլեկտրոնային եղանակով: Թղթային ակտը ստորագրվում է տվյալ բժշկական կազմակերպության համապատասխան հանձնաժողովի նախագահի ու անդամների կողմից և հաստատվում է կազմակերպության կնիքով, թղթային ակտը զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ ներկայացվում է փոստով կամ առձեռն: Էլեկտրոնային առողջապահության ԱՐՄԵԴ համակարգի միջոցով առողջական վիճակի հետազոտման ակտի լրացման դեպքում դրվում է էլեկտրոնային ստորագրություն:

ՀՌԲՀ-ում կամ ԿՊ ՌԲՀ-ում փորձաքննվող զինապարտների հետազոտման արդյունքները ձևակերպվում են թղթային կամ էլեկտրոնային տեղեկանքի, իսկ ծառայության համար ոչ պիտանի ճանաչված պահեստազորի սպայական կազմի համար՝ եզրակացության ձևով (համաձայն N 10 ձևի):

35. Բժշկական կազմակերպությունը պարտավոր է քաղաքացուն կամ նրա օրինական ներկայացուցչին կամ նրա կողմից լիազորված անձին տրամադրել տեղեկություններ առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին: Սույն կետում նշված տվյալները քաղաքացուն կարող են հասանելի լինել նաև էլեկտրոնային առողջապահության ԱՐՄԵԴ համակարգի միջոցով:

36. Զինվորական կոմիսարիատների կողմից ներկայացված տեղեկատվության հիման վրա զինվորական հաշվառման ժամանակ և հայտարարված զորակոչի արդյունքներով բուժման ենթակա կամ ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչված քաղաքացիների առողջական վիճակի նկատմամբ հետագա շարունակական հսկողության և պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության ու սպասարկման առողջապահական պետական նպատակային ամենամյա ծրագրերին համապատասխան անվճար բուժման աշխատանքները կազմակերպվում են ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպությունների կողմից:

## 6. ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

37. Նախազորակոչային, ինչպես նաև սահմանված ժամկետում հաշվառման չկանգնած զորակոչային տարիքի քաղաքացիների զինվորական հաշվառման ժամանակ զինվորական կոմիսարիատում կազմակերպվում և անցկացվում է քաղաքացիների համակողմանի ուսումնասիրություն՝ առողջական և ֆիզիկական զարգացման վիճակը գնահատելու համար, որի շրջանակներում՝

1) զինվորական կոմիսարիատում կազմված՝ տվյալ տարում զինվորական հաշվառման ենթակա քաղաքացիների անվանացուցակների և ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպություններից ստացված՝ հաջորդ տարվա ընթացքում 16 տարին լրացող նախազորակոչիկների առողջության անձնագրերի և բժշկական քարտերի (այդ թվում՝ էլեկտրոնային) քաղվածքների հիման վրա կազմվում են

ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպություններ ըստ օրերի քաղաքացիների ներկայանալու անվանացուցակները, որոնք մինչև յուրաքանչյուր տարվա հունվարի 25-ը տրամադրվում են ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպություններին՝ սույն որոշմամբ հաստատված հետազոտություններն իրականացնելու համար: Էլեկտրոնային առողջապահության ԱՐՄԵԴ համակարգի միջոցով ուղեգրումներն իրականացվում են էլեկտրոնային եղանակով.

2) ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպությունների կողմից իրականացված հետազոտությունների արդյունքների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը և տվյալները ստանալուց հետո ԶԿԲՀ-ների միջոցով կազմակերպվում են հաշվառման ենթակա քաղաքացիների բժշկական զննության և փորձաքննության աշխատանքները.

3) զինվորական կոմիսարիատի բժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա իրականացվում են քաղաքացիներին բժշկական կազմակերպություններ հետազոտությունների ուղեգրման աշխատանքները.

4) իրականացվում են ռազմաբժշկական փորձաքննության արդյունքներով բուժման կամ դինամիկ հսկողության կարիք ունեցող քաղաքացիների տվյալները ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպություններ ներկայացման աշխատանքները:

38. Նախազորակոչային և զորակոչային տարիքի քաղաքացիները զինվորական հաշվառման ժամանակ ռազմաբժշկական փորձաքննություն են անցնում անձամբ՝ զինվորական կոմիսարիատում կազմված անձնական գործով, որը պետք է լինի կարված, համարակալված՝ վերջին էջում նշելով ցանկը, էջերի թիվը և հաստատված լինի համապատասխան զինվորական կոմիսարիատի զորակոչի բաժանմունքի պետի ու զինվորական կոմիսարի ստորագրությամբ և զինվորական կոմիսարիատի կնիքով:

Առանձին դեպքերում, երբ զինվորական հաշվառման ենթակա անձը, գտնվելով մշտական բնակության վայրում, տառապում է ծանր հիվանդությամբ և զրկված է ինքնուրույն տեղաշարժվելու հնարավորությունից, կամ նրան տեղափոխումը հակացուցված է, զինվորական կոմիսարի համաձայնությամբ զինապարտի

փորձաքննությունը կարող է կատարվել զինվորական կոմիսարիատ ներկայացված փաստաթղթերի հիման վրա:

39. Ռազմաբժշկական փորձաքննության ընթացքում յուրաքանչյուր բժիշկ-մասնագետ զորակոչիկի հաշվառման քարտում կատարում է գրառում պիտանիության վերաբերյալ: Առողջական խնդիրների կամ գանգատների առկայության դեպքում բժիշկ-մասնագետի կողմից լրացվում է օբյեկտիվ զննության թերթիկ՝ համաձայն N 2 ձևի, որում գրանցվում են ներկայացված գանգատները, օբյեկտիվ զննությամբ հայտնաբերված խնդիրները, նախնական ախտորոշումը, հետազոտության ուղեգրելու անհրաժեշտության մասին համապատասխան մասնագետի հիմնավորումը, իսկ հետազոտումից հետո նաև տրված ախտորոշումը, զինվորական ծառայության համար նրա պիտանիության աստիճանը՝ նշելով բժշկական հետազոտման և փորձաքննության օրը, ամիսը, տարեթիվը: Օբյեկտիվ զննության թերթիկը ստորագրում է այն լրացնող բժիշկ-մասնագետը՝ նշելով անունը և ազգանունը:

Այն դեպքերում, երբ կլինիկական և լաբորատոր-գործիքային հետազոտությունների տվյալները բավարար չեն քաղաքացու պիտանիությունը որոշելու, ամբուլատոր հետազոտմամբ վերջնական ախտորոշումը կամ ֆունկցիան հստակեցնելու համար, բժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա համապատասխան զինվորական կոմիսարը նրան հետազոտման է ուղեգրում բժշկական կազմակերպություն՝ նշելով նախնական ախտորոշումը: Ուղեգրում նախնական ախտորոշման հետ միաժամանակ կարող է նշվել պարտադիր իրականացման ենթակա հետազոտությունների ծավալը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև կոնկրետ հստակեցման ենթակա կասկածվող ախտորոշումը: Ուղեգրին կցվում է առողջական վիճակի հետազոտման ակտը (համաձայն N 4 ձևի):

40. Փորձաքննության արդյունքներով զինվորական կոմիսարիատի բժշկի (հանձնաժողովի նախագահի) կողմից լրացվում է առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն (համաձայն N 3 ձևի), որը հաստատվում է զինվորական կոմիսարիատի բժշկի (հանձնաժողովի նախագահի) ստորագրությամբ և կնիքով:

41. Յուրաքանչյուր ամսվա ընթացքում կատարված զինվորական հաշվառման ենթակա քաղաքացիների ռազմաբժշկական փորձաքննության ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, զինվորական կոմիսարիատների կողմից համապատասխան ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություն է ներկայացվում մանրամասն տեղեկատվություն հիվանդությունների և ախտաբանական վիճակների մասին՝ համապատասխան բուժում կամ հսկողություն կազմակերպելու համար: Տվյալները կարող են ներկայացվել նաև էլեկտրոնային առողջապահության ԱՐՄԵԴ համակարգի միջոցով:

42. Զինվորական կոմիսարիատը քաղաքացու կամ նրա օրինական ներկայացուցչի կամ նրա կողմից լիազորված անձի դիմելու դեպքում տրամադրում է անձնական գործում առկա առողջական վիճակի հետազոտական փաստաթղթերի և եզրակացության պատճենը: Այդ տվյալները քաղաքացուն կարող են հասանելի լինել նաև էլեկտրոնային առողջապահության ԱՐՄԵԴ համակարգի միջոցով:

## 7. ՌՈՒՀ-ԵՐՈՒՄ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԱԾ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

43. Մինչև ՌՈՒՀ ՌԲՀ-ի փորձաքննությանը ներկայացվելը դիմորդները փորձաքննվում են ԶԿԲՀ-ների կողմից՝ անցնելով բոլոր հետազոտությունները, որոնք նախատեսված են ՌՈՒՀ ՌԲՀ-ի կողմից փորձաքննություն անցկացնելու դեպքում:

ՌՈՒՀ ՌԲՀ-ի փորձաքննություններն անցկացվում են պարտադիր կարգով փորձաքննվողի ներկայությամբ: Հանձնաժողովի անդամները պարտավոր են զննել փորձաքննվողին, ուսումնասիրել հիվանդության պատմագրի, ինչպես նաև ներկայացված այլ փաստաթղթերի տվյալները, որից հետո տալ եզրակացություն ըստ սահմանված կարգի:

44. Նախքան ռազմաբժշկական փորձաքննությունն անցնելը բոլոր դիմորդ-ներն (բացի թռիչքային պատրաստման անձնակազմից) անցնում են կրծքավան-

դակի օրգանների ռենտգենաբանական (ֆլյուորոգրաֆիկ) հետազոտություն, որովայնի օրգանների ՈՒՁ հետազոտություն, կատարվում են արյան, մեզի ընդհանուր անալիզ, ԷՍԳ և ԷխոՍԳ, անհրաժեշտության դեպքում նաև այլ հետազոտություններ: Հետազոտությունների տվյալները գրանցվում են ՌՈՒՀ ընդունվողի բժշկական փորձաքննության քարտում:

45. Յուրաքանչյուր դիմորդ փորձաքննվում է թերապևտի, սրտաբանի, վնասվածքաբանի, վիրաբույժի, նյարդաբանի, հոգեբույժի, ակնաբույժի, ատամնաբույժի, օտոլարինգոլոգի, մաշկաբան-վեներոլոգի և, անհրաժեշտության դեպքում, այլ բժիշկ-մասնագետների կողմից, ինչպես նաև ենթարկվում է հոգեբանական թեստավորման ստանդարտիզացված թեստերով:

46. Ռազմաբժշկական փորձաքննությունից առաջ բժիշկները հետազոտում են թեկնածուների առողջական վիճակի վերաբերյալ տվյալներ ներառող փաստաթղթերը՝

1) քաղաքացիների դեպքում՝ անձնական գործը՝ բժշկական զննման գրառումներով.

2) զինծառայողների դեպքում՝ բժշկական գրքույկը՝ հերթական բժշկական հետազոտման տվյալներով (սպայական անձնակազմի համար՝ վերջին 3 տարվա):

Զինծառայող-դիմորդների բժշկական գրքույկները ՌՈՒՀ ՌԲՀ-ի կողմից ուղարկվում են մանդատային հանձնաժողովներին կամ կնքված վիճակում տրվում են դիմորդներին:

ՌՈՒՀ ՌԲՀ-ի եզրակացությունը՝ փորձաքննվողի տվյալներով (համաձայն գրանցման մատյանի սյունակների) քարտուղարը գրանցում է եզրակացությունների արձանագրությունների գրանցման մատյանում և եզրակացության ձևաթերթիկում (համաձայն N 14 ձևի), որը կցվում է անձնական գործին:

## 8. ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻ ԺԱՄԱՆԱԿ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

47. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ժամանակ զինվորական կոմիսարիատները կազմակերպում և անցկացնում են քաղաքացիների անձնական գործերի և բժշկական փաստաթղթերի ուսումնասիրություն՝ առողջական և ֆիզիկական զարգացման վիճակը գնահատելու համար, որի շրջանակներում՝

1) զինվորական կոմիսարիատում կազմված հայտարարված զորակոչին ենթակա քաղաքացիների անվանացուցակների հիման վրա կազմվում են ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպություններ ըստ օրերի քաղաքացիների ներկայանալու անվանացուցակները, որոնք էլ մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 15-ը և սեպտեմբերի 15-ը տրամադրում են ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպություններին՝ անհրաժեշտ լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններն իրականացնելու համար.

2) ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպությունների կողմից իրականացված հետազոտությունների արդյունքների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերն ու տվյալները և համապատասխան դիսպանսերներից պահանջված տեղեկատվություններն ստանալուց հետո ԶԿԲՀ-ների միջոցով կազմակերպվում են զորակոչի ենթակա քաղաքացիների բժշկական զննության և փորձաքննության աշխատանքները.

3) կազմակերպվում են իրավասու բժշկական հանձնաժողովների եզրակացությունների հիման վրա բժշկական կազմակերպություններ զորակոչիկներին հետազոտությունների ուղեգրման աշխատանքները.

4) կազմակերպվում են ԶԿԲՀ-ի նախնական եզրակացությամբ առողջական վիճակի պատճառով բուժման կարիք ունեցող կամ զինվորական ծառայության համար ոչ պիտանի (ժամանակավորապես ոչ պիտանի) զորակոչիկներին կենտրոնական բժշկական հանձնաժողովի փորձաքննությանը ներկայացնելու աշխատանքները.

5) ռազմաբժշկական փորձաքննության արդյունքներով բուժման և դինամիկ հսկողության կարիք ունեցող զորակոչիկների համապատասխան բժշկական կազմակերպություններ ուղեգրման աշխատանքները:

48. Պարտադիր զինվորական ծառայության ենթակա քաղաքացիները ռազմաբժշկական փորձաքննություն են անցնում անձամբ՝ զինվորական կոմիսարիատում կազմված անձնական գործով:

Այն դեպքերում, երբ փորձաքննության ենթակա անձը, գտնվելով մշտական բնակության վայրում, տառապում է ծանր հիվանդությամբ և զրկված է ինքնուրույն տեղաշարժվելու հնարավորությունից, կամ նրան տեղափոխումը հակացուցված է, զինվորական կոմիսարի համաձայնությամբ զինապարտի փորձաքննությունը կարող է կատարվել զինվորական կոմիսարիատ ներկայացված փաստաթղթերի հիման վրա:

Առանձին դեպքերում, երբ զորակոչի ենթակա անձը բուժում է ստանում Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս և գտնվում է բժիշկների անմիջական հսկողության տակ, կամ այդ զորակոչիկին տեղափոխումը հակացուցված է, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի որոշմամբ զորակոչիկի փորձաքննությունը կարող է կատարվել զինվորական կոմիսարիատ ներկայացված փաստաթղթերի հիման վրա:

49. Ռազմաբժշկական փորձաքննության ընթացքում յուրաքանչյուր բժիշկմասնագետ զորակոչիկի հաշվառման քարտում կատարում է գրառում պիտանիության վերաբերյալ: Առողջական խնդիրների կամ գանգատների առկայության դեպքում բժիշկ-մասնագետի կողմից լրացվում է օբյեկտիվ զննության թերթիկ՝ համաձայն N 2 ձևի, որում գրանցվում են ներկայացված գանգատները, օբյեկտիվ զննությամբ հայտնաբերված խնդիրները, նախնական ախտորոշումը, հետազոտության ուղեգրելու անհրաժեշտության մասին համապատասխան մասնագետի հիմնավորումը, իսկ հետազոտումից հետո նաև տրված ախտորոշումը, զինվորական ծառայության համար նրա պիտանիության աստիճանը՝ նշելով բժշկական հետազոտման և փորձաքննության օրը, ամիսը, տարեթիվը: Օբյեկտիվ զննության

թերթիկը ստորագրում է այն լրացնող բժիշկ-մասնագետը՝ նշելով անունը և ազգանունը:

Այն դեպքերում, երբ կլինիկական և լաբորատոր-գործիքային հետազոտությունների տվյալները բավարար չեն քաղաքացու պիտանիությունը որոշելու, ամբուլատոր հետազոտմամբ վերջնական ախտորոշումը կամ ֆունկցիան հստակեցնելու համար, բժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա համապատասխան զինվորական կոմիսարը նրան հետազոտման է ուղեգրում բժշկական կազմակերպություն՝ նշելով նախնական ախտորոշումը: Ուղեգրում նախնական ախտորոշման հետ միաժամանակ կարող է նշվել պարտադիր իրականացման ենթակա հետազոտությունների ծավալը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև կոնկրետ հստակեցման ենթակա կասկածվող ախտորոշումը: Ուղեգրին կցվում է առողջական վիճակի հետազոտման ակտը (համաձայն N 4 ձևի):

Օբյեկտիվ զննության թերթիկը և ուղեգիրը կարող են լրացվել նաև էլեկտրոնային առողջապահության ԱՐՄԵԴ համակարգի միջոցով:

50. Փորձաքննության արդյունքներով զինվորական կոմիսարիատի բժշկի (հանձնաժողովի պատասխանատու անձի) կողմից լրացվում է առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն (համաձայն N 3 ձևի), որը հաստատվում է զինվորական կոմիսարիատի բժշկի (հանձնաժողովի պատասխանատու անձի) ստորագրությամբ և կնիքով: Եզրակացությունը էլեկտրոնային առողջապահության ԱՐՄԵԴ համակարգի միջոցով լրացնելու դեպքում դրվում է էլեկտրոնային ստորագրություն:

Զինվորական ծառայության համար պիտանի (պիտանի սահմանափակումով) ճանաչվելու դեպքում առողջական խնդիրների կամ ախտորոշված հիվանդությունների, վնասվածքների հետևանքների, ֆիզիկական զարգացման խնդիրների մասին գրառումներ են կատարվում նաև բժշկական գրքույկում՝ նշելով հիվանդության ախտորոշումը, ինչպես նաև իրականացված կանխարգելիչ պատվաստումների վերաբերյալ տեղեկատվությունը՝ հիմք ընդունելով առողջության անձնագրի տվյալները:

Ռազմաբժշկական փորձաքննության արդյունքներով զինվորական ծառայության համար պիտանի կամ սահմանափակումով պիտանի ճանաչվելուց հետո

զորակոչից խուսափելու համար քրեական հետապնդման մեջ գտնվող և զորակոչի հարցը լուծելու նպատակով վարույթ իրականացնող մարմնի կողմից զինվորական կոմիսարիատ ներկայացված քաղաքացիների ռազմաբժշկական փորձաքննություն իրականացվում է սույն որոշմամբ սահմանված կարգով՝ ընդհանուր հիմունքներով՝ անկախ հարուցված քրեական գործի շրջանակներում իրականացված դատաբժշկական կամ ռազմաբժշկական փորձաքննության արդյունքներից:

Զորակոչի ենթակա քաղաքացիների հետազոտման արդյունքները ձևակերպվում են քաղաքացիական կամ զինվորական բժշկական կազմակերպությունում՝ առողջական վիճակի հետազոտման ակտով, որը ներկայացվում է զինվորական կոմիսարիատ փոստով կամ առձեռն կամ էլեկտրոնային առողջապահության ԱՐՄԵԴ համակարգի միջոցով, որի հիման վրա ԶԿԲՀ-ի կողմից տրվում է նախնական եզրակացություն՝ զինվորական ծառայությանը քաղաքացու պիտանիության մասին:

51. Եթե զինվորական կոմիսարիատի բժշկական հանձնաժողովի կողմից տրված նախնական եզրակացությամբ զորակոչիկի առողջական վիճակը թույլ չի տալիս նրան զորակոչել, կամ եթե ԶԿԲՀ-ի համապատասխան մասնագետի կողմից ներկայացված է հիմնավոր անհամաձայնություն հետազոտական ակտի եզրակացության հետ, ապա նա ներկայացվում է ԿԲՀ-ին՝ պիտանիության վերաբերյալ եզրակացություն տալու նպատակով: ԶԿԲՀ-ի բժիշկ-մասնագետի կողմից ԿԲՀ ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ նախնական եզրակացություն տալուց հետո զինվորական կոմիսարիատի բժիշկը (հանձնաժողովի պատասխանատուն) զինվորական կոմիսարին է ներկայացնում զորակոչիկի անձնական գործը՝ եզրակացության մեջ նշելով, թե որ մասնագիտությամբ և ինչ առողջական խնդրով պետք է փորձաքննվի զորակոչիկը ԿԲՀ-ի կողմից:

52. Եթե բժշկական կազմակերպությունում իրականացված հետազոտությունների ծավալը և զորակոչիկի առողջական վիճակի ակտը չեն համապատասխանում կառավարության կողմից ընդունված զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկի և քաղաքացու առողջական վիճակի հետազոտման և

ռազմաբժշկական փորձաքննության կարգի պահանջներին՝ ԿԲՀ-ն կարող է հետազոտությունը պահանջող բժիշկ-մասնագետի գրավոր հիմնավորմամբ զորակոչիկին բժշկական կազմակերպության կրկնակի հետազոտության ուղեգրելու վերաբերյալ տալ եզրակացություն (համաձայն N 5 ձևի): Լրացուցիչ, ստուգիչ կամ հսկողական, այդ թվում՝ հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտության ուղեգրումն իրականացվում է համապատասխան զինվորական կոմիսարի կողմից: Հետազոտությունից հետո կազմվում է առողջական վիճակի հետազոտման ակտ:

Հայտարարված զորակոչի ընթացքում կենտրոնական բժշկական հանձնաժողովի կամ զինվորական կոմիսարիատի բժշկական հանձնաժողովի կողմից իրականացված փորձաքննության արդյունքներով զինվորական ծառայության համար պիտանի կամ սահմանափակումով պիտանի ճանաչվելուց հետո զորակոչիկի առողջական վիճակի փոփոխության կամ նոր հանգամանքներ ի հայտ գալու և առողջական վիճակի լրացուցիչ հետազոտության անհրաժեշտություն առաջանալու դեպքում վերջինս զինվորական կոմիսարիատի բժշկական հանձնաժողովի նախնական եզրակացությամբ ներկայացվում է կենտրոնական բժշկական հանձնաժողովին՝ լրացուցիչ հետազոտության ուղեգրելու վերաբերյալ եզրակացություն կայացնելու նպատակով, և ուղեգրվում է հետազոտության միայն կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից այդ մասին համապատասխան եզրակացություն կայացվելու դեպքում:

Նախորդող զորակոչերի ընթացքում կենտրոնական բժշկական հանձնաժողովի փորձաքննությունն անցած քաղաքացիների փորձաքննությունը հայտարարված զորակոչի ընթացքում իրականացվում է սույն որոշմամբ սահմանված կարգով՝ ընդհանուր հիմունքներով, ընդ որում զինվորական կոմիսարիատի բժշկական հանձնաժողովը զորակոչիկին կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից նախորդող զորակոչերի ընթացքում փորձաքննության ենթարկած հիվանդություններով պարտադիր ուղեգրում է առողջական վիճակի հետազոտության, որից հետո կայացնում նրա պիտանիության վերաբերյալ եզրակացություն:

53. Քաղաքացու առողջական վիճակի փորձաքննության արդյունքում ԿԲՀ-ի կողմից կայացվում է եզրակացություն (համաձայն N 6 ձևի), որը կարող է մուտքագրվել նաև էլեկտրոնային առողջապահության ԱՐՄԵԴ համակարգ: Եզրակացության կայացման օրվանից հետո ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում, քաղաքացու առողջական վիճակի վերաբերյալ եզրակացությունը ԿԲՀ-ի նախագահի կողմից ներկայացվում է հանրապետական զորակոչային հանձնաժողովին:

Զորակոչիկի առողջական վիճակի անհրաժեշտ հետազոտությունները հայտարարված զորակոչի ընթացքում ավարտված չլինելու դեպքում ԿԲՀ եզրակացություն չի կայացվում, համապատասխան հետազոտությունները շարունակվում են հայտարարված զորակոչից հետո, և զորակոչիկը ԿԲՀ փորձաքննությանն է ներկայացվում հաջորդ զորակոչի ժամանակ:

54. Եթե զորակոչիկը համաձայն չէ իր՝ զինվորական ծառայության պիտանիության վերաբերյալ ԶԿԲՀ-ի կողմից կայացված եզրակացությանը, կարող է այն բողոքարկել ԿԲՀ-ին և փորձաքննություն անցել ԿԲՀ-ի կողմից, որի դեպքում ԿԲՀ-ի կողմից անձի փորձաքննությունն իրականացնելու կամ բողոքը մերժելու որոշումն ընդունվում է՝ հիմք ընդունելով անձի առողջական վիճակի հետազոտության առկա փաստաթղթերը:

55. Զինվորական ծառայության համար պիտանի ճանաչված և պարտադիր զինվորական ծառայության զորակոչվող քաղաքացիներին զորակոչի օրը զինվորական կոմիսարիատ ներկայանալիս զննում են ԶԿԲՀ-ները, կատարվում է ջերմաչափում, մարմնական զննում, ինչն արձանագրվում է զինվորական կոմիսարիատի բժշկի կողմից լրացված եզրակացության մեջ:

56. Առողջական վիճակի պատճառով բուժման կարիք ունեցող զորակոչիկներին օրենքով սահմանված կարգով տրվում է տարկետում՝ մինչև մեկ տարի ժամկետով, իսկ զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչված զորակոչիկներին՝ օրենքով սահմանված կարգով տրվում է տարկետում՝ 3 տարի ժամկետով: Տարկետման ժամկետը լրանալուց հետո, անկախ առողջական վիճակից, զորակոչիկները կրկին փորձաքննվում են ԿԲՀ-ի կողմից:

57. Այն զորակոչիկները, որոնք հայտարարված զորակոչի ընթացքում հետազոտությունների արդյունքում ճանաչվում են պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումով սահմանափակումներ նախատեսող հինգ և ավելի հոդվածներով, ճանաչվում են բուժման կարիք ունեցող, և նրանց տրվում է տարկետում մեկ անգամ մինչև մեկ տարի ժամկետով՝ բուժման և/կամ դիտարկման նպատակով: Տարկետման ավարտից հետո առողջական նույն վիճակի պահպանման պարագայում, զորակոչիկները ճանաչվում են պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումով՝ ծառայության հեշտացված օրվա կարգացուցակով:

58. Տրամադրված տարկետման ժամկետի ավարտից շուտ զորակոչիկի ռազմաբժշկական փորձաքննությունը կարող է իրականացվել միայն նրա կողմից ՀՀ պաշտպանության նախարարին դիմելու և իր առողջական վիճակի փոփոխության (ինչի արդյունքում զորակոչիկը կարող է ճանաչվել պիտանի կամ սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար) վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ ներկայացնելու դեպքում՝ ՀՀ պաշտպանության նախարարի որոշմամբ: Նշված կարգով իրականացված ռազմաբժշկական փորձաքննության արդյունքում քաղաքացու զինվորական ծառայության համար պիտանի կամ սահմանափակումով պիտանի չճանաչվելու դեպքում նրա վերաբերյալ իրավասու հանձնաժողովի կողմից տրված եզրակացությունը չի ներկայացվում ՀՀ պաշտպանության նախարարի հաստատմանը, և քաղաքացուն նախկինում տրված տարկետումը մնում է ուժի մեջ:

59. ԶԿԲՀ-ների կողմից ախտորոշված ցանկում նախատեսված հիվանդության կամ ֆիզիկական թերության առկայության դեպքում զորակոչային տարիքի անձանց հետագա՝ պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային կամ ամբուլատոր բուժումն իրականացվում է համապատասխան բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպության կողմից՝ զինվորական կոմիսարի ստորագրությամբ և կնիքով վավերացված ուղեգրով, իսկ զորակոչերի միջև ընկած ժամանակահատվածում, ինչպես նաև օրենքով սահմանված այլ հիմքերով տարկետում ստացած քաղաքացիների ուղեգրման դեպքում՝

նաև ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպության կողմից տրված ուղեգրով՝ զինվորական կոմիսարի գրավոր համաձայնությամբ, որի պատճենը կցվում է անձնական գործին:

60. Հայտարարված զորակոչին առողջական վիճակի պատճառով ԿԲՀ-ի կողմից զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչվող և զորակոչի ընթացքում 24, իսկ պահեստազորի սպայական կազմի զորակոչի ենթակա անձանց 32 տարին լրացած (լրացող), կամ բուժման կարիք ունեցող և նախատեսվող տարկետման նվազագույն ժամկետի ընթացքում 27 (35) տարին լրացող քաղաքացիները ճանաչվում են ոչ պիտանի զինվորական ծառայության համար և ենթակա են ազատման զինվորական ծառայությունից:

61. Զինապարտների զինվորական հաշվառման ժամանակ, հետևյալ հիվանդությունների դեպքում, ԶԿԲՀ-ներում կազմվում է արձանագրություն և հետագայում՝ զորակոչային տարիքում առանց լրացուցիչ հետազոտության, նրանք համապատասխան փաստաթղթերով ներկայացվում են կենտրոնական բժշկական հանձնաժողովի փորձաքննությանը՝

1) ծանր և խորը աստիճանի մտավոր հետամնացություն.

2) վերջույթի բացակայություն կամ ամպուտացիա՝ ցանկացած մակարդակում.

3) երկու ոտքերի մատների բացակայություն.

4) կոնքազդրային հոդի բնածին չբուժված հոդախախտ.

5) 4-րդ աստիճանի սկոլիոզ.

6) խոնդրոդիսպլազիա.

7) ախոնդրոպլազիա.

8) երիկամի բացակայություն.

9) ոչ բնական հետանցք.

10) Գիրշպրունգի հիվանդություն վիրահատությունից հետո՝ հաստատված փաստաթղթերով.

11) երկկողմանի օրխէկտոմիա.

12) փայծաղի կամ լեղապարկի կամ թոքի հետվիրահատական կամ բնածին բացակայություն՝ հաստատված փաստաթղթերով.

13) սեռական անդամի բնածին կամ հետվիրահատական բացակայություն.

14) գաստրէկտոմիա.

15) դեմքն այլանդակող տոտալ հեմանգիոմա և բնածին նևուս.

16) չարորակ նորագոյացություններ՝ հաստատված փաստաթղթերով.

17) սուր կամ քրոնիկ լեյկոզներ՝ հաստատված փաստաթղթերով.

18) ակնագնդի բացակայություն.

19) ոսպնյակի բացակայություն կամ աֆակիա կամ արտիֆակիա.

20) բնածին կուրություն.

21) բաց վիրահատություն՝ սրտի ցանկացած արատի ժամանակ.

22) ղեքստրակարդիա օրգանների տոտալ ինվերսիայով՝ հաստատված սոնոգրաֆիկ և ռենտգեն հետազոտությամբ.

23) մանկական ցերեբրալ կաթված կամ կայուն արտահայտված մնացորդային երևույթներ տարած մանկական ցերեբրալ կաթվածից հետո՝ ակնհայտ կլինիկական նշաններով.

24) գանգոսկրի դեֆեկտ 20 ք/սմ և ավելի.

25) միկրոցեֆալիա՝ կենտրոնական նյարդային համակարգի խիստ արտահայտված խանգարումով.

26) մնացորդային երևույթներ մանկաբարձական պարեզից հետո՝ վերջույթի ֆունկցիայի և տրոֆիկայի զգալի խանգարումով.

27) մնացորդային երևույթներ պերիֆերիկ նյարդի վնասվածքից հետո՝ վերջույթի ֆունկցիայի և տրոֆիկայի զգալի խանգարումով.

28) պոլիոմիելիտ.

29) բնածին միկրոտիա՝ անցուղու մասնակի կամ լրիվ ատրեզիայով, միջին ականջի թերի զարգացմամբ, լսողության կորստով.

30) խուլ և համր.

31) հավելյալ քրոմոսոմային համախտանիշ՝ տրիսոմիա 21.

32) ալբինոզ.

33) հիպոֆիզար նանիզմ.

34) ակրոմեգալիա.

35) շաքարային դիաբետ, տիպ 1՝ հաստատված փաստաթղթերով:

62. Առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչված, ինչպես նաև սույն կարգի 60-րդ և 61-րդ կետերի հիմքով զինվորական ծառայությունից ազատման ենթակա զորակոչիկները «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 21-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն ազատվում են զինվորական ծառայությունից և հաշվառվում են պահեստազորում:

63. Զորակոչից տարկետում ստացած և բուժման կամ դինամիկ հսկողության կարիք ունեցող զորակոչիկները զորակոչի ավարտից հետո մեկամսյա ժամկետում ուղեգրվում են համապատասխան բժշկական կազմակերպություն՝ ուղեգրին կցելով նաև ԿԲՀ-ի եզրակացության և զորակոչիկի առողջական վիճակի հետազոտության ակտի (ակտերի) պատճենները:

64. Զինվորական կոմիսարը քաղաքացու կամ նրա օրինական ներկայացուցչի կամ նրա կողմից լիազորված անձի դիմելու դեպքում տրամադրում է անձնական գործում առկա զորակոչիկի առողջական վիճակի հետազոտական փաստաթղթերի և իրավասու բժշկական հանձնաժողովների կողմից տրված եզրակացությունների պատճենները:

## 9. ՊԱՀԵՍՏԱԶՈՐՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ԿԱՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԶԻՆԱՊԱՐՏՆԵՐԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

65. Պահեստազորում հաշվառվող կամ հաշվառված զինապարտների ռազմաբժշկական փորձաքննությունը զինվորական կոմիսարի կարգադրությամբ իրականացնում են ԶԿԲՀ-ները՝

1) զինվորական հաշվառման վերցնելիս.

2) զորահավաքային զորակոչի ժամանակ.

3) պայմանագրային զինվորական ծառայության ներգրավելիս.

4) պահեստազորային պատրաստության միջոցառումներին ներգրավելիս.

5) օրենքով սահմանված վերափորձաքննության պարտականություն ունենալու դեպքերում.

6) պահեստազորում հաշվառված զինապարտի՝ իր առողջական վիճակի փոփոխության վերաբերյալ տվյալներ ներկայացնելու դեպքերում:

66. Պահեստազորում հաշվառված զինապարտները փորձաքննվում են ըստ հիվանդությունների ցանկի I, III, IV, V, VI սյունակների (պայմանավորված փորձաքննության նպատակով, զինվորական կոչումով և ռազմահաշվառական մասնագիտությամբ):

67. Մինչև փորձաքննությունն սկսվելը զինվորական կոմիսարիատն անհրաժեշտ փաստաթղթերը, իսկ սպայական կազմի և ենթասպաների համար նաև անձնական գործերը, ուսումնասիրման է ներկայացնում բժշկական հանձնաժողովին:

68. Պահեստազորում հաշվառված կամ հաշվառման ենթակա զինապարտները ռազմաբժշկական փորձաքննություն են անցնում անձամբ: Այն դեպքերում, երբ փորձաքննության ենթակա անձը, գտնվելով մշտական բնակության վայրում, տառապում է ծանր հիվանդությամբ և զրկված է ինքնուրույն տեղաշարժվելու հնարավորությունից, կամ նրան տեղափոխումը հակացուցված է, զինվորական կոմիսարի համաձայնությամբ զինապարտի փորձաքննությունը կարող է կատարվել զինվորական կոմիսարիատ ներկայացված փաստաթղթերի հիման վրա:

Առանձին դեպքերում, երբ ռազմաբժշկական փորձաքննության ենթակա անձը վերափորձաքննություն անցնելու պարտականության ժամանակ բուժում է ստանում (ստացել է) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս և գտնվում է (գտնվել է) բժիշկների անմիջական հսկողության տակ, կամ այդ քաղաքացուն տեղափոխումը հակացուցված է (հակացուցված է եղել), Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի որոշմամբ, նրա փորձաքննությունն իրավասու բժշկական հանձնաժողովի կողմից կարող է կատարվել զինվորական կոմիսարիատ ներկայացված փաստաթղթերի հիման վրա:

69. Բժշկական հետազոտության ընթացքում բժիշկ-մասնագետները պահեստազորում հաշվառված (հաշվառվող) զինապարտների առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն տալիս են անհատական գնահատման կարգով՝

ռազմաբժշկական փորձաքննության թերթիկում (համաձայն N 2/1 ձևի)՝ կատարելով գրառում պիտանիության վերաբերյալ: Անհրաժեշտության դեպքում բժիշկ-մասնագետի կողմից լրացվում է համապատասխան թերթիկ, որում գրանցվում են ներկայացված գանգատները, օբյեկտիվ զննությամբ հայտնաբերված խնդիրները, ախտորոշումը, հետազոտության ուղեգրելու անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան մասնագետի հիմնավորումը, իսկ հետազոտումից հետո նաև տրված ախտորոշումը, զինվորական ծառայության համար նրա պիտանիության աստիճանը՝ նշելով բժշկական հետազոտման օրը, ամիսը, տարեթիվը: Թերթիկը ստորագրում է այն լրացնող բժիշկ-մասնագետը՝ նշելով անունը և ազգանունը: Տվյալները կարող են լրացվել նաև էլեկտրոնային առողջապահության ԱՐՄԵԴ համակարգի միջոցով, որի դեպքում դրվում է էլեկտրոնային ստորագրություն:

70. Փորձաքննության արդյունքներով զինվորական կոմիսարիատի բժշկի (հանձնաժողովի պատասխանատու անձի) կողմից լրացվում է առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն (համաձայն N 3 ձևի), որը հաստատվում է զինվորական կոմիսարիատի բժշկի (հանձնաժողովի պատասխանատու անձի) ստորագրությամբ և կնիքով: Տվյալները կարող են լրացվել նաև էլեկտրոնային առողջապահության ԱՐՄԵԴ համակարգի միջոցով, որի դեպքում դրվում է էլեկտրոնային ստորագրություն:

Շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի զինապարտների ռազմաբժշկական փորձաքննության թերթիկները, առողջական վիճակի հետազոտման ակտերը և առողջական վիճակի վերաբերյալ եզրակացությունները պահվում են զինվորական կոմիսարիատում առանձին, իսկ սպայական և ենթասպայական կազմերի զինապարտներինը՝ նրանց անձնական գործերում:

71. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 6-րդ և 7-րդ մասերի համաձայն պարտադիր զինվորական ծառայությունից ազատված և պահեստազորում հաշվառված, ինչպես նաև զինվորական ծառայության ընթացքում առողջական վիճակի պատճառով ոչ պիտանի ճանաչված և նույն օրենքի 29-րդ

հոդվածի 4-րդ մասի համաձայն զինվորական ծառայությունից արձակված և պահեստազորում հաշվառված քաղաքացիները մինչև 27 (35) տարեկանը լրանալը, իսկ սահմանված ժամկետներում փորձաքննության չներկայացածները՝ նաև 27 (35) տարին լրանալուց հետո փորձաքննության են ենթարկվում զինվորական կոմիսարիատի բժշկական հանձնաժողովի կողմից: Նշված կատեգորիայի պահեստազորայինները զինվորական կոմիսարի կողմից ուղեգրվում են համապատասխան բժշկական կազմակերպություն՝ բուժհետազոտում անցկացնելու համար, որից հետո ներկայացված առողջական վիճակի հետազոտման ակտի հիման վրա ԶԿԲՀ-ների կողմից իրականացվում է նրանց փորձաքննությունը: Մինչև 27 (35) տարեկանը լրանալը ռազմաբժշկական փորձաքննության արդյունքներով զինվորական ծառայության համար պիտանի (պիտանի սահմանափակումով) ճանաչվելու դեպքում զինապարտները հաշվառվում են զինվորական կոմիսարիատի զորակոչի բաժանմունքում, հայտարարված զորակոչի, իսկ զորակոչն ավարտված լինելու դեպքում հաջորդող զորակոչի ընթացքում ներկայացվում են կենտրոնական բժշկական հանձնաժողովի քննարկմանը: Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից պիտանի ճանաչվելու դեպքում նրանք ենթակա են օրենքով սահմանված կարգով զորակոչվելու կամ զորակոչի միջոցով ուղարկվելու շարունակելու պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետը:

Սույն կետում նշված փորձաքննության ենթակա քաղաքացիների փորձաքննությունը սահմանված ժամկետից շուտ կարող է իրականացվել միայն նրա կողմից ՀՀ պաշտպանության նախարարին դիմելու և իր առողջական վիճակի փոփոխության (ինչի արդյունքում քաղաքացին կարող է ճանաչվել պիտանի կամ սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար և զորակոչվել պարտադիր զինվորական ծառայության) վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ ներկայացնելու դեպքում՝ ՀՀ պաշտպանության նախարարի որոշմամբ: Իրականացված բժշկական փորձաքննության արդյունքում քաղաքացու զինվորական ծառայության համար պիտանի կամ սահմանափակումով պիտանի չճանաչվելու դեպքում քաղաքացին փորձաքննության է կանչվում նախկինում սահմանված ժամկետում:

## III. ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ (ՆՐԱՆՑ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ) ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

### 10. ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ (ՆՐԱՆՑ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ) ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

72. Զինծառայողների, ինչպես նաև սույն որոշմամբ սահմանված դեպքերում նրանց հավասարեցված անձանց և քաղաքացիների ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնող մարմիններն են՝

1) զինվորական հոսպիտալի կամ առանձին բժշկական ջոկատի հոսպիտալային ռազմաբժշկական հանձնաժողովը (արտահաստիքային).

2) Կենտրոնական պոլիկլինիկայի ռազմաբժշկական հանձնաժողովը (արտահաստիքային).

3) Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալի բժշկաթռիչքային փորձաքննության հանձնաժողովը (արտահաստիքային).

4) Կենտրոնական ռազմաբժշկական փորձաքննական կենտրոնը (հաստիքային):

### 11. ՀՈՍՊԻՏԱԼԻ ԿԱՄ ԱՌԱՆՁԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՋՈԿԱՏԻ ՀՈՍՊԻՏԱԼԱՅԻՆ ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

73. Հոսպիտալի կամ առանձին բժշկական ջոկատի հոսպիտալային ռազմաբժշկական հանձնաժողովը (այսուհետ՝ ՀՌԲՀ) փորձաքննություն իրականացնող արտահաստիքային մարմին է, որը կազմավորվում է հոսպիտալի պետի հրամանով՝ համաձայնեցվում ՀՀ ԶՈՒ-ի ռազմաբժշկական վարչության պետի և ԿՌԲՓԿ-ի պետի կողմից: ՀՌԲՀ-ի նախագահ, որպես կանոն, նշանակվում է հոսպիտալի պետի բուժական գծով տեղակալը (բուժմասի պետը), անդամներ՝ առաջատար (գլխավոր) մասնագետները և բուժական բաժանմունքների պետերը: Ռազմաբժշկական հանձնաժողովի կազմում, նախագահից բացի, ընդգրկվում են երկու, չորս կամ վեց անդամ և մեկ քարտուղար: Եթե ռազմաբժշկական հանձնաժողովի

քարտուղարի պաշտոն հաստիքացուցակով նախատեսված չէ, ապա նշանակվում է արտահաստիքային:

ՀՌԲՀ-ի փորձաքննությանը կարող են մասնակցել նաև ՀՀ ՋՈՒ-ի ռազմաբժշկական վարչության ներկայացուցիչներ:

74. ՀՌԲՀ-ն, իր խնդիրներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իրականացնում է զինծառայողների, քաղաքացիական հատուկ ծառայողների, պայմանագրային զինվորական ծառայություն անցնողների, ռազմաուսումնական հաստատություններում ուսուցանողների ռազմաբժշկական փորձաքննությունը.

2) նախապես փորձաքննում է ԿՌԲՓԿ ուղեգրվող անձանց.

3) եռամսյակը մեկ անգամ ամփոփում է իր գործունեության արդյունքները՝ հաշվետվություն ներկայացնելով ԿՌԲՓԿ և ըստ վերադասության.

4) տալիս է եզրակացություն՝

ա. զինվորական ծառայության պիտանիության վերաբերյալ,

բ. ծառայողական պարտականություններից մասնակի ազատման կամ արձակուրդ հիվանդության պատճառով (վերականգնողական) տրամադրելու վերաբերյալ,

գ. բուժման մեջ գտնվող զինծառայողների բուժումը շարունակելու վերաբերյալ,

դ. զինվորական ծառայության պիտանիության աստիճանի փոփոխման, ինչպես նաև բուժման սահմանված ժամկետների երկարաձգման վերաբերյալ՝ այն ներկայացնելով ԿՌԲՓԿ,

ե. չորս ամիս և ավելի ժամկետով արտերկիր խաղաղապահ առաքելությունների, զորավարժությունների գործուղվողների զինվորական ծառայության պիտանիության վերաբերյալ.

5) միայն ՀՀ պաշտպանության նախարարության կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալի ՀՌԲՀ-ն իրականացնում է նաև բժշկաթռիչքային փորձաքննություն՝ հանձնաժողովի կազմում պարտադիր ընդգրկելով թռիչքային փորձաքննության բաժանմունքի պետին.

6) վերահսկում է հոսպիտալում բուժական-կանխարգելիչ գործընթացի կազմակերպումը ռազմաբժշկական փորձաքննության տեսակետից:

75. ՀՌԲՀ-ի փորձաքննություններն անցկացվում են պարտադիր կարգով փորձաքննվողի ներկայությամբ (անկողնային հիվանդների դեպքում՝ ըստ ներկայացված բժշկական փաստաթղթերի), բուժող բժշկի ներկայացմամբ: Հանձնաժողովի անդամները պարտավոր են զննել փորձաքննվողին, ուսումնասիրել հիվանդության պատմագրի, ինչպես նաև ներկայացված այլ փաստաթղթերի տվյալները, որից հետո հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ տալ եզրակացություն (համաձայն N 10 ձևի): Ընդունված եզրակացության հետ համաձայն չլինելու դեպքում՝ հանձնաժողովի անդամն իրավունք ունի ներկայացնելու հատուկ կարծիք, որը կցվում է եզրակացությանը:

## 12. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀՈՍՊԻՏԱԼԻ ԲԺՇԿԱԹՌԻՉՔԱՅԻՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ (ԿԿԶՀ ԲԹՓՀ)

76. ԲԹՀ-ը ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնող արտահաստիքային մարմին է, որը կազմավորվում է ՀՀ ՊՆ ԿԿԶՀ պետի հրամանով՝ ՀՀ ԶՈՒ ՌԲՎ պետի և ԿՌԲՓԿ-ի պետի համաձայնությամբ: ԲԹՀ նախագահ է նշանակվում ՀՀ ՊՆ ԿԿԶՀ-ի թռիչքային փորձաքննության բաժանմունքի պետը: Հանձնաժողովում ընդգրկվում են մասնագետներ՝ թերապևտ, նյարդաբան, վիրաբույժ, ակնաբույժ, ՔԿԱ մասնագետ, ատամնաբույժ, քարտուղար՝ թռիչքային փորձաքննության բաժանմունքի ավագ բուժքույրը: Անհրաժեշտության դեպքում, հանձնաժողովի մեջ կարող են ներգրավվել նաև այլ նեղ մասնագետներ: ԲԹՀ եզրակացությունները կայացվում են համաձայն քաղաքացիների և զինծառայողների բժշկաթռիչքային պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկի: Ստացիոնար պայմաններում կայացված ԲԹՀ եզրակացությունները հաստատվում են ՀՀ ՊՆ ԿՌԲՓԿ-ի կողմից: ԿՌԲՓԿ-ի կողմից տրվում է եզրակացություն ինչպես քաղաքացիների և զինծառայողների՝ բժշկաթռիչքային պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկի, այնպես էլ զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկի II, III, V և VI սյունակների համաձայն:

Բժշկաթռիչքային փորձաքննության առարկան է հանդիսանում առողջական վիճակից ելնելով թռիչքների համար պիտանիության աստիճանի որոշումը, ինչպես նաև թռիչքային առաջադրանքներին մասնակցող օդաչուական և վերգետնյա անձնակազմի տարբեր կատեգորիաների մասնակցության թույլտվությունը: Բժշկաթռիչքային փորձաքննության նպատակը օդաչուական անձնակազմի առողջության ու բարձր աշխատունակության պահպանումն է և թռիչքների անվտանգության բարձրացումը: ՀՀ ԶՈՒ-ում բժշկաթռիչքային փորձաքննությունն իրականացվում է կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալի բժշկաթռիչքային փորձաքննության հանձնաժողովի (ԲԹՀ) կողմից:

## 13. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱՅԻ ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

77. Կենտրոնական պոլիկլինիկայի ռազմաբժշկական հանձնաժողովը (այսուհետ՝ ԿՊ ՌԲՀ) ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնող արտահաստիքային մարմին է, որը կազմավորվում է կենտրոնական պոլիկլինիկայի պետի հրամանով՝ համաձայնեցված ՀՀ ԶՈՒ-ի ռազմաբժշկական վարչության պետի և ԿՌԲՓԿ-ի պետի կողմից: ԿՊ ՌԲՀ-ի նախագահ, որպես կանոն, նշանակվում է պոլիկլինիկայի պետի բուժական գծով տեղակալը (բուժմասի պետը), անդամներ՝ բուժական բաժանմունքների պետերը և նեղ բժիշկ-մասնագետները:

78. Ռազմաբժշկական հանձնաժողովի կազմում, նախագահից բացի, ընդգրկվում է չորս անդամ: Եթե ռազմաբժշկական հանձնաժողովի քարտուղարի պաշտոնը հաստիքացուցակով նախատեսված չէ, ապա նշանակվում է արտահաստիքային: ԿՊ ՌԲՀ-ի փորձաքննությանը կարող է մասնակցել նաև ՀՀ ԶՈՒ-ի ռազմաբժշկական վարչության ներկայացուցիչը:

79. ԿՊ ՌԲՀ-ն, իր խնդիրներին համապատասխան, իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իրականացնում է զինծառայողների, քաղաքացիական հատուկ ծառայողների, պայմանագրային զինվորական ծառայության անցնողների, ռազմաուսումնական

հաստատություններ ընդունվողների, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր կնքած անձանց ռազմաբժշկական փորձաքննությունը, քաղաքացիական այն անձանց բժշկական փորձաքննությունը, ովքեր աշխատելու են ՌՆ, ԻՃ այլ աղբյուրների, ՀՎԲՄ և ԷՄԴ ստեղծող սարքերով.

2) նախապես փորձաքննում է ԿՌԲՓԿ ուղեգրվող անձանց.

3) եռամսյակը մեկ անգամ ամփոփում է իր գործունեության արդյունքները՝ հաշվետվություն ներկայացնելով ԿՌՓԿ և ըստ վերադասության.

4) տալիս է եզրակացություն՝

ա. զինվորական ծառայության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր կնքած քաղաքացիների պիտանիության վերաբերյալ,

բ. ծառայողական պարտականություններից մասնակի ազատման՝ մինչև 15 օր կամ հիվանդության պատճառով (վերականգնողական) արձակուրդ տրամադրելու վերաբերյալ՝ մինչև 30 օր ժամկետով,

գ. ամբուլատոր բուժման մեջ գտնվող զինծառայողների բուժումն ամբուլատոր կարգով շարունակելու վերաբերյալ,

դ. զինվորական ծառայության պիտանիության վերաբերյալ չորս ամիս և ավելի ժամկետով օտարերկրյա պետություններ խաղաղապահ առաքելությունների, զորավարժությունների գործուղվողների առողջական վիճակի վերաբերյալ,

ե. զինվորական ծառայության պիտանիության աստիճանի փոփոխման, ինչպես նաև բուժման սահմանված ժամկետների երկարաձգման վերաբերյալ՝ այն ներկայացնելով ԿՌԲՓԿ:

80. ԿՊ ՌԲՀ-ի փորձաքննություններն անցկացվում են ըստ անհրաժեշտության, պարտադիր կարգով փորձաքննվողի ներկայությամբ, բուժող բժշկի ներկայացմամբ՝ համաձայն սույն կարգի 13-րդ կետի պահանջների: Հանձնաժո-

ղովի անդամները պարտավոր են զննել փորձաքննվողին, ուսումնասիրել ամբուլատոր քարտի, ինչպես նաև ներկայացված այլ փաստաթղթերի տվյալները՝ այդ մասին կատարելով գրառում բժշկական հետազոտման քարտում (համաձայն N 13 ձևի), որից հետո հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ տալ եզրակացություն՝ (համաձայն N 10 ձևի):

Ընդունված եզրակացության հետ համաձայն չլինելու դեպքում, հանձնաժողովի անդամն իրավունք ունի ներկայացնելու հատուկ կարծիք, որը կցվում է եզրակացությանը:

81. ԿՊ ՌԲՀ-ի եզրակացությունը՝ փորձաքննվողի տվյալներով (համաձայն գրանցման մատյանի սյունակների) քարտուղարը գրանցում է եզրակացությունների արձանագրությունների գրանցման մատյանում և եզրակացության ձևաթերթիկում, որը կցվում է ամբուլատոր քարտին:

## 14. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

82. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կենտրոնական ռազմաբժշկական փորձաքննական կենտրոնը ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնող հաստիքային ղեկավար մարմին է, որի պետը նշանակվում է ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով և հաշվետու է ՀՀ պաշտպանության նախարարին: ԿՌԲՓԿ-ի պետի տեղակալը, բաժինների պետերը, բժիշկ-մասնագետները և հաստիքացուցակով նախատեսված այլ մասնագետներ նշանակվում են ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով՝ ԿՌԲՓԿ-ի պետի ներկայացմամբ: ԿՌԲՓԿ-ն համալրվում է թերապևտ, վիրաբույժ, նյարդաբան, հոգեբույժ, ակնաբույժ, քիթ-կոկորդ-ականջաբան, մաշկավեներաբան, սրտաբան և վնասվածքաբան բժիշկ-մասնագետներով:

83. ԿՌԲՓԿ-ն ապահովում է սույն որոշմամբ սահմանված դեպքերում ռազմաբժշկական փորձաքննության իրականացումը:

84. ԿՌԲՓԿ-ի լիազորությունները սահմանվում են սույն կարգով և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամաններով: ԿՌԲՓԿ-ն

ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով կնիք, ձևաթղթեր և այլ անհատականացման միջոցներ:

85. ԿՌԲՓԿ-ի ռազմաբժշկական հարցերով ընդունված եզրակացությունները վերջնական են և կարող են բողոքարկվել ըստ վերադասության կամ դատական կարգով՝ եզրակացությունը կայացնելուց հետո երկամսյա ժամկետում: ԿՌԲՓԿ-ի փորձաքննություններն անցկացվում են ըստ անհրաժեշտության, պարտադիր կարգով փորձաքննվողի ներկայությամբ, բուժող բժշկի ներկայացմամբ: Բժիշկ-մասնագետները պարտավոր են զննել փորձաքննվողին, ուսումնասիրել հիվանդության պատմագրի, ինչպես նաև ներկայացված այլ փաստաթղթերի տվյալները, որից հետո ներկայացնել եզրակացություն (համաձայն N 11 ձևի): Ընդունված եզրակացության հետ համաձայն չլինելու դեպքում ԿՌԲՓԿ անդամն իրավունք ունի ներկայացնելու հատուկ կարծիք, որը կցվում է եզրակացությանը:

86. ԿՌԲՓԿ-ն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) տալիս է եզրակացություն՝

ա. փորձաքննվողների, օտարերկրյա պետությունների ռազմաուսումնական հաստատություններում ուսանելու մեկնող դիմորդների, ՌՈՒՀ-երի կուրսանտների և ունկնդիրների զինվորական ծառայության համար պիտանիության աստիճանի վերաբերյալ,

բ. զինծառայողների, զինապարտների և աշխատողների՝ ռադիոակտիվ նյութերով, իոնիզացնող ճառագայթման այլ աղբյուրներով, հրթիռային վառելիքի բաղադրամասերով, էլեկտրամագնիսական դաշտ ստեղծող սարքավորումներով աշխատելու պիտանիության վերաբերյալ,

գ. զինծառայողների հիվանդությունների և վնասվածքների՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապի վերաբերյալ (համաձայն N 7 ձևի),

դ. պայմանագրային զինծառայության անցնող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների զինվորական ծառայության համար պիտանիության աստիճանի վերաբերյալ՝ ուսումնասիրելով հետազոտությունների արդյունքները, բժշկական փաստաթղթերը և զինվորական կոմիսարի կողմից ներկայացված զինվորական հաշվառման և զորակոչի վերաբերյալ տվյալները,

ե. ստորադաս փորձաքննական մարմինների եզրակացությունները հաստատելու կամ մերժելու վերաբերյալ՝ կայացնելով այլ եզրակացություն,

զ. զինծառայողներին ծառայողական պարտականություններից մասնակի ազատելու կամ հիվանդության պատճառով (վերականգնողական) արձակուրդ տրամադրելու վերաբերյալ.

2) անհրաժեշտության դեպքում տալիս է համապատասխան ցուցումներ զինծառայողների (զինապարտների) բժշկական հսկողության և հետագա ծառայության պայմանների կազմակերպման վերաբերյալ.

3) անհրաժեշտության դեպքում տալիս է եզրակացություն զինծառայողների լրացուցիչ բուժհետազոտման, ինչպես նաև անձնական գործի, թոշակավորման, այլ բժշկական փաստաթղթերի, բնութագրերի, արխիվային տեղեկանքների և այլ փաստաթղթերի պահանջի վերաբերյալ.

4) անհրաժեշտության դեպքում բուժհաստատությունների, ՀՀ ԱՆ գլխավոր մասնագետներին հրավիրում է ԿՌԲՓԿ փորձաքննությանը մասնակցելու համար.

5) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին ներկայացնում է կարծիք յուրաքանչյուր զորակոչից հետո երիտասարդ համալրման առողջական վիճակի և բժշկական հանձնաժողովների աշխատանքների որակի, թերությունների վերաբերյալ:

87. ԿՌԲՓԿ-ն իրավասու է՝

1) տեղեկություններ և բժշկական փաստաթղթեր պահանջել ռազմաբժշկական հանձնաժողովներից, զորամասերից, ռազմաբժշկական և քաղաքացիական բժշկական հաստատություններից՝ համակողմանի և լիարժեք փորձաքննության, ինչպես նաև փորձաքննություն իրականացնող մարմինների գործունեության արդյունքների քննարկման և գնահատման համար.

2) ուսումնասիրել ռազմաբժշկական և քաղաքացիական բժշկական հաստատություններում գտնվող փորձաքննության ենթակա անձանց հետազոտման ախտորոշման և բուժման ընթացքը, ինչպես նաև փորձաքննության որակը.

3) ծառայությանը չառնչվող հիվանդությունների պատճառով վաղաժամկետ զորացրման ենթակա զինծառայողների վերաբերյալ եզրակացություններ կայացնելուց առաջ, անհրաժեշտության դեպքում, հրավիրել քննարկում՝ ներգրավելով տվյալ զինծառայողի զորակոչի համար պատասխանատու պաշտոնատար անձանց (զինվորական կոմիսարիատի բժիշկ, համապատասխան զինվորական կոմիսար, ԿԲՀ բժիշկ-մասնագետ և այլն).

4) հետազոտման, բուժման և փորձաքննության նպատակով զինծառայողներին ուղեգրել ռազմաբժշկական հաստատություններ:

## 15. ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ (ՆՐԱՆՑ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ) ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

88. Զինծառայողներին (նրանց հավասարեցված անձանց) ռազմաբժշկական փորձաքննության ուղարկելու իրավասություն ունեն՝

1) շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զինծառայողներին՝ զորամասի հրամանատարը (ՊՆ կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը), ԿՌԲՓԿ-ի պետը, ՀՀ ԶՈՒ-ի ռազմաբժշկական վարչության պետը, ռազմաուսումնական հաստատության պետը.

2) սպաներին, ենթասպաներին և պայմանագրային շարքային կազմի զինծառայողներին՝ զորամասի հրամանատարը (ՊՆ կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը), ԿՌԲՓԿ-ի պետը:

89. Ռազմաբժշկական կամ քաղաքացիական բժշկական հաստատությունում բուժվող (հետազոտվող) այն ժամկետային զինծառայողները, որոնց ծառայության ժամկետը լրանալու կապակցությամբ ենթակա են զորացրման, բուժումն ավարտվելուց կամ հիվանդության (վնասվածքի) պատճառով հետևանքների ի հայտ գալուց հետո ուղարկվում են ռազմաբժշկական փորձաքննության՝ պատճառական կապի տրամադրման նպատակով: Առողջական վիճակի վերաբերյալ գանգատի առկայության դեպքում բժշկական հետազոտության ենթակա են նաև պարտադիր զինվորական ծառայության ժամկետը լրանալու կապակցությամբ զինվորական ծառայությունից արձակվող ժամկետային զինծառայողները:

90. Հիվանդություն ձեռք բերած կամ վնասվածք ստացած զինծառայողները, որպես կանոն, ենթակա են ռազմաբժշկական փորձաքննության բուժման ավարտից հետո: Ընդ որում, եթե հիվանդության կամ վնասվածքի բնույթից ակնհայտ է, որ զինծառայողը ճանաչվելու է զինվորական ծառայության համար ոչ պիտանի, ապա զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչելու փորձաքննական եզրակացությունները կարող են կայացվել նաև զինծառայողի բուժման ընթացքում:

91. Պարտադիր ժամկետային ծառայության շարքային կազմի զինծառայողներին ռազմաբժշկական փորձաքննության ուղարկելիս ներկայացվում են՝

1) ուղեգիր.

2) բժշկական գրքույկը.

3) զորամասից ծառայողական և բժշկական բնութագրեր.

4) ըստ անհրաժեշտության տրվում են նաև՝

ա. անձնական գործը,

բ. հիվանդությանը բնորոշ դրսևորումների առնվազն երկու արձանագրությունը,

գ. տեղեկանք հիվանդություն ձեռք բերելու կամ վնասվածք ստանալու վերաբերյալ (համաձայն N 8 ձևի),

դ. քրեական գործի ավարտի վերաբերյալ տեղեկանք վարույթն իրականացնող մարմնի կողմից:

92. Զինվորական ծառայության մեջ գտնվող սպաները, ենթասպաները և պայմանագրային շարքային կազմի զինծառայողները ռազմաբժշկական փորձաքննության ուղարկվում են բժշկական գրքույկով, զորամասի (ՊՆ կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի) ծառայողական և բժշկական բնութագրերով:

93. ԿՊ-ի կամ հոսպիտալային ՌԲՀ-ի, ԿՌԲՓԿ-ի նիստերին փորձաքննվողի առողջական վիճակի հսկողության արդյունքների, ծառայողական պարտականությունների կատարման վրա զինծառայողի հիվանդությունների ազդեցության մասին տեղեկատվություն տրամադրելու, ինչպես նաև փորձաքննական հնարավոր եզրակացության վերաբերյալ դիրքորոշում հայտնելու նպատակով կարող է հրավիրվել զորամասի բժիշկը և անմիջական (ուղղակի) հրամանատարը:

94. Շարքային կազմի պարտադիր զինծառայողներին հիվանդության պատճառով բուժական (վերականգնողական) արձակուրդ տրամադրվում է ՀՌԲՀ-ի, ԿՊ ՌԲՀ-ի ներկայացմամբ՝ ԿՌԲՓԿ-ի եզրակացությամբ: Հիվանդության պատճառով բուժական (վերականգնողական) արձակուրդ տրամադրելու վերաբերյալ եզրակացությունը ԿՌԲՓԿ-ի կողմից կարող է եզրակացություն կայացվել փաստաթղթային փորձաքննության կարգով՝ առանց փորձաքննվողի ներկայության:

95. Զինծառայողներին, ունկնդիրներին հիվանդության պատճառով բուժական (վերականգնողական) արձակուրդ տրամադրվում է մինչև 30 օր ժամկետով: Արձակուրդի տևողության վերաբերյալ ՌԲՀ-ն եզրակացություն է կայացնում անհատապես՝ ըստ բժշկական ցուցումների: Առանձին դեպքերում արձակուրդի տևողությունը ԿՌԲՓԿ-ն կարող է երկարացնել՝ ընդհանուր տևողությունը չգերազանցելով 60 օրը: Արձակուրդը դիտվում է որպես բուժման կուրսի համապատասխան մաս: Ընդհանուր առմամբ, հիվանդության պատճառով բուժման և հիվանդության պատճառով բուժական (վերականգնողական) արձակուրդում անընդմեջ գտնվելու ժամանակահատվածը չի կարող գերազանցել 120 օրը՝ զորամասից ուղեգրվելու օրվանից հաշված: Բացառիկ դեպքերում, զինծառայողի բուժման ու շարք վերադարձման նպատակով, ԿՌԲՓԿ հիմնավորմամբ և պաշտպանության նախարարի որոշմամբ, բուժման ժամկետը կարող է երկարացվել ևս մինչև 30 օր: Սույն կետով նախատեսված հիվանդության պատճառով բուժման և հիվանդության պատճառով բուժական (վերականգնողական) արձակուրդում անընդմեջ գտնվելու առավելագույն ժամկետը լրանալու դեպքում զինծառայողը ենթակա է պարտադիր փորձաքննության ԿՌԲՓԿ կողմից:

96. Զինծառայողներին առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու հիմքով զինվորական ծառայությունից արձակելու ժամանակ բուժում իրականացնող համապատասխան ռազմաբժշկական հաստատության պետի կողմից զինծառայողին կարող է տրվել արձակուրդ մինչև 30 օրացուցային օր տևողությամբ, կենտրոնական ռազմաբժշկական փորձաքննական կենտրոնի եզրակացության հիման վրա՝ մինչև ՀՀ պաշտպանության նախարարի հրամանը:

97. Զինծառայողները կարող են մինչև 15 օր ժամկետով մասնակի ազատվել ծառայողական պարտականություններից՝ ՌԲՀ-ի եզրակացությամբ (ՌԲՀ-ի եզրակացության մեջ նշվում է՝ ինչպիսի պարապմունքներից և աշխատանքներից պետք է ազատել, որքան ժամանակով և ինչպիսի բուժկանխարգելիչ միջոցառումներ պետք է անցկացնի զորամասի բժիշկը): Նման եզրակացությունը ԿՌԲՓԿ-ի հաստատմանը չի ներկայացվում: Հիվանդության պատճառով ծառայողական պարտականություններից մասնակի ազատում զինծառայողին չի կարող տրվել անընդմեջ երկու անգամից ավելի:

98. Ռազմաբժշկական փորձաքննության եզրակացությունները գրանցվում են եզրակացությունների արձանագրությունների գրանցման մատյանում (համաձայն N 9 ձևի) և եզրակացության ձևաթերթիկում (համաձայն N 10 ձևի):

99. Ռազմաբժշկական փորձաքննության բոլոր դեպքերում ԿՌԲՓԿ-ն եզրակացություն է կայացնում հիվանդության կամ վնասվածքի՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապի մասին: Վկաների ցուցմունքները հիվանդության կամ վնասվածքի՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապի մասին եզրակացության համար հիմք չեն կարող հանդիսանալ: Զինծառայողի հիվանդության կամ վնասվածքի՝ զինծառայության հետ պատճառական կապի տրամադրման (այդ թվում՝ պատճառական կապի վերաբերյալ եզրակացությունն առ ոչինչ, անվավեր ճանաչելու կամ ուժը կորցնելու) հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով և սույն կարգով:

100. Զինծառայողների հիվանդությունների կամ վնասվածքների՝ զինծառայության հետ պատճառական կապի տրամադրման կարգի դրույթները տարածվում են՝

1) Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի պարտադիր ու պայմանագրային ծառայության զինծառայողների վրա.

2) Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցների վրա.

3) Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների, նախկին ԽՍՀՄ զինված ուժերի զինծառայողների, ինչպես նաև այլ պետություններում մարտական գործողությունների (խաղաղապահ առաքելությունների, զորավարժությունների) մասնակից զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց վրա.

4) պահեստազորի վարժական հավաքների և զորահավաքների մասնակիցների վրա՝ դրանց ընթացքում ձեռք բերած հիվանդությունների կամ ստացած վնասվածքների դեպքերում:

101. ԿՌԲՓԿ-ն զինվորական ծառայության հետ պատճառական կապը սահմանելիս տալիս է հետևյալ եզրակացությունները՝

1) հիվանդությունը ձեռք է բերել կամ վնասվածքը ստացել է զինվորական ծառայության ընթացքում.

2) հիվանդությունը ձեռք է բերել կամ վնասվածքը ստացել է զինվորական պարտականությունները կատարելու հետևանքով.

3) հիվանդությունը ձեռք է բերել կամ վնասվածքը ստացել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ժամանակ.

4) հիվանդությունը ձեռք է բերել կամ վնասվածքը ստացել է Հայրենական մեծ պատերազմի և այլ պետություններում մարտական գործողությունների (խաղաղապահ առաքելությունների, զորավարժությունների) ժամանակ.

5) հիվանդությունը ձեռք է բերել կամ վնասվածքը ստացել է վարժական հավաքներին մասնակցելու ժամանակ.

6) հիվանդությունը ձեռք է բերել կամ վնասվածքը ստացել է հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով,ժ.

7) հիվանդությունը ձեռք է բերել կամ վնասվածքը ստացել է Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի վթարի հետևանքների վերացման աշխատանքների ժամանակ զինվորական ծառայողական պարտականությունները կատարելիս:

102. Փորձաքննական եզրակացությունները կայացնելիս՝ ԿՌԲՓԿ-ը հիմք է ընդունում զորամասի հրամանատարի տեղեկանքը՝ դեպքի հանգամանքների

վերաբերյալ, իսկ դեպքի առթիվ քրեական վարույթ կամ ծառայողական քննություն իրականացվելու դեպքում՝ վարույթի կամ ծառայողական քննության շրջանակներում պարզված հանգամանքները: Ընդ որում, եթե օրենքով սահմանված կարգով հիմնավորվել է, որ զինծառայողը՝

1) հիվանդությունը ձեռք է բերել կամ վնասվածքը ստացել է իր կողմից կատարված ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում, ապա անկախ դեպքի հանգամանքներից՝ ԿՌԲՓԿ-ի կողմից պատճառական կապ է տրվում միայն զինվորական ծառայության ընթացքի հետ.

2) հիվանդությունը ձեռք է բերել կամ վնասվածքը ստացել է զինվորական ծառայությունից խուսափելու նպատակով կատարած ինքնախեղման արդյունքում, ապա ԿՌԲՓԿ-ի կողմից զինվորական ծառայության հետ պատճառական կապ չի տրվում.

3) հիվանդությունն ունեցել է մինչև զինվորական ծառայության ներգրավվելը, ապա ԿՌԲՓԿ-ի կողմից զինվորական ծառայության հետ պատճառական կապ չի տրվում.

4) եթե նախկինում ունեցած հիվանդությունը խորացել է (զարգացել է) և հանգեցրել առողջական վիճակի վատթարացմանը, ապա տրվում է պատճառական կապ միայն ծառայության ընթացքի համար:

103. Եթե փորձաքննվողի մոտ հայտնաբերվել են տարբեր հանգամանքներում ձեռք բերած հիվանդություններ կամ ստացած վնասվածքներ, կամ դրանց հետևանքներ, ապա ԿՌԲՓԿ-ը դրանցից յուրաքանչյուրի պատճառական կապի վերաբերյալ կայացնում է առանձին փորձաքննական եզրակացություններ՝ պայմանավորված դրանց ստանալու (ձեռք բերելու) հանգամանքներով:

104. Եթե զինծառայողի հիվանդության կամ վնասվածքի դեպքով հարուցված է քրեական վարույթ կամ նշանակված է ծառայողական քննություն, ապա ԿՌԲՓԿ-ը պատճառական կապի որոշումը կայացնում է դրանց պաշտոնական ավարտից հետո՝ դեպքի հանգամանքների վերաբերյալ ստացված տեղեկատվության հիման վրա, բացառությամբ սույն կարգի 106-րդ կետով սահմանված դեպքում:

105. ԿՌԲՓԿ-ի կողմից ծառայության հետ պատճառական կապի որոշման համար անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը՝

1) զորամասի հրամանատարի կողմից տրված տեղեկանք հիվանդությունը ձեռք բերելու կամ վնասվածքը ստանալու հանգամանքների մասին.

2) անձը հաստատող փաստաթուղթ (ծառայողական վկայական, անձնագիր).

3) զորամասի բուժծառայության կամ այլ ռազմաբժշկական հաստատության եզրակացությունը.

4) քրեական գործի ավարտի վերաբերյալ տեղեկանք կամ ծառայողական քննության եզրակացության պատճենը:

Զորամասի հրամանատարի կողմից տրվող տեղեկանքի բացակայության դեպքում զինծառայողի ձեռք բերած հիվանդության կամ ստացած վնասվածքի մասին վկաների ցուցմունքները հիմք չեն պատճառական կապը որոշելու համար:

ԿՌԲՓԿ-ի կողմից պատճառական կապի վերաբերյալ կայացրած եզրակացությունները կարող են բողոքարկվել եզրակացության կայացման օրվանից երկամսյա ժամկետում՝ վարչական (վերադասության) կամ դատական կարգով: ԿՌԲՓԿ-ի կողմից պատճառական կապի վերաբերյալ կայացրած եզրակացությունը վարչական (վերադասության) կամ դատական կարգով բողոքարկելու դեպքում անձի կրկնակի ռազմաբժշկական փորձաքննությունն իրականացվում է սույն կարգի համաձայն՝ հաշվի առնելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները:

106. Ռազմական դրության ժամանակ ԿՌԲՓԿ-ի կողմից զինծառայողների և (կամ) մարտական գործողություններին կամավոր հիմունքներով մասնակցող քաղաքացիների վերաբերյալ համապատասխան պատճառական կապի որոշումը կարող է ընդունվել առանց սույն կարգի 105-րդ կետում նախատեսված տեղեկանքների առկայության՝ զինծառայողի և (կամ) մարտական գործողություններին կամավոր հիմունքներով մասնակցող քաղաքացու հիվանդության կամ վնասվածքի դեպքի հանգամանքների և սույն կարգի 102-րդ կետի 1-ին և (կամ) 2-րդ ենթակետերով սահմանված պայմանների բացակայության վերաբերյալ քրեական վարույթ իրականացնող մարմնի կողմից տրված գրության հիման վրա: Սույն

կետով նախատեսված կարգով համապատասխան պատճառական կապի վերաբերյալ որոշում կայացնելուց հետո քրեական վարույթ իրականացնող մարմնի կողմից սույն կարգի 102-րդ կետի 1-ին և (կամ) 2-րդ ենթակետերով սահմանված պայմանների առկայության վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ներկայացվելու դեպքում ԿՌԲՓԿ-ի կողմից տրված պատճառական կապի որոշումը վերանայվում է՝ սույն կարգի 99-րդ կետով սահմանված կարգով:

107. Իրավասու պետական մարմինը հաշմանդամության պատճառական կապը որոշելիս ընդունում է այն ձևակերպումը, որն արձանագրված է ԿՌԲՓԿ-ի եզրակացության մեջ և իրավասու չէ փոփոխելու դրանում նշված հիմքը, եթե հաշմանդամության են հանգեցրել նշված հիվանդությունը կամ վնասվածքը, ինչպես նաև դրանց բարդությունները:

108. Այն անձինք, ովքեր մասնակցել են Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին, սակայն իրենց հիվանդության կամ վնասվածքի պատճառական կապի մասին չունեն ԿՌԲՓԿ-ի (ԿՌԲՀ) կայացրած եզրակացություններ, բայց ունեն զինվորական ծառայության (մարտական գործողությունների) ժամանակ ձեռք բերած հիվանդությունը կամ ստացած վնասվածքը հավաստող փաստաթղթեր (տրված 1989-1994 թվականներին), դիմում են ԿՌԲՓԿ՝ միայն Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանման կողմից տրվող ուղեգրի և դրան կից համապատասխան փաստաթղթերի (զորամասի հրամանատարի տեղեկանք, մարտական գործողություններին մասնակցած քաղաքացիներին մասնակցությամբ ստեղծված հասարակական կազմակերպությունների տեղեկանք, կամ հիվանդություն ձեռք բերելը կամ վնասվածք ստանալը հավաստող ստացիոնար բուժման էպիկրիզ կամ հետազոտման եզրակացություն) առկայության դեպքում:

109. Այն անձինք, ովքեր մասնակցել են Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի վթարի հետևանքների վերացման աշխատանքներին, սակայն չունեն իրենց հիվանդության կամ վնասվածքի պատճառական կապի մասին ԿՌԲՓԿ-ի կայացրած եզրակացություն, բայց ունեն 1986 թվականի ապրիլի 26-ից մինչև 1987

թվականի դեկտեմբերի 31-ը Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի վթարի հետևանքների վերացման աշխատանքների կատարման ժամանակ ձեռք բերած հիվանդությունը կամ ստացած վնասվածքը հավաստող փաստաթղթեր, դիմում են ԿՌԲՓԿ՝ ներկայացնելով իրենց զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատի ուղեգիր և «Այրվածքաբանության և մաշկաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (նախկինում՝ բժշկական ճառագայթաբանության գիտահետազոտական ինստիտուտ) տեղեկանքը կամ միջգերատեսչական փորձաքննության խորհրդի եզրակացությունը՝ հիվանդության պատճառական կապի մասին, ամբուլատոր քարտ և ձեռք բերած հիվանդությունը կամ ստացած վնասվածքը հաստատող ստացիոնար բուժման կամ հետազոտման էպիկրիզ:

110. ԿՌԲՓԿ-ը փորձաքննում է նաև հիվանդության պատճառով զինված ուժերից արձակված, բայց ԿՌԲՓԿ-ի եզրակացություն չունեցող նախկին զինծառայողներին, որոնց ձեռք բերած հիվանդության կամ ստացած վնասվածքի պատճառական կապը ԿՌԲՓԿ-ի կողմից քննարկվում և հաստատվում է միայն ռազմաբժշկական փորձաքննության մարմինների եզրակացության հիման վրա:

111. Զինվորական ծառայության ժամանակ ձեռք բերած հիվանդության կամ ստացած վնասվածքի պատճառական կապի մասին փորձաքննական եզրակացությունները քննարկվում և ընդունվում են՝ անկախ զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելու ժամանակահատվածից:

112. Հիվանդացած անձանց ծառայության հետ հաշմանդամության պատճառական կապի վերաբերյալ եզրակացություն տալու համար Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանման ուղեգրով համապատասխան բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողով են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը՝

1) տեղեկանք զինվորական կոմիսարիատից՝ ծառայության և զորացրման մասին.

2) առողջապահական կազմակերպությունից՝ հիվանդությունը կամ վնասվածքը հաստատող փաստաթուղթ.

3) ԿՌԲՓԿ-ի եզրակացությունը՝ հիվանդությունը կամ վնասվածքը զինվորական ծառայության հետ պատճառական կապ ունենալու մասին:

113. Այն դեպքերում, երբ զինվորական ծառայության ընթացքում ռազմաբժշկական փորձաքննության մարմինների կողմից զինվորական ծառայության համար սահմանափակումով պիտանի ճանաչված նախկին զինծառայողների վերաբերյալ ԿՌՓԿ-ի կողմից եզրակացություն չի կայացվել, զինվորական կոմիսարիատի կողմից նրանց փաստաթղթերն ուղարկում է ԿՌԲՓԿ՝ հիվանդության կամ վնասվածքի պատճառական կապի վերաբերյալ եզրակացություն տալու համար: ԿՌԲՓԿ են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը՝

1) զինվորական փաստաթուղթ (զինվորական գրքույկ, տեղեկանք զինվորական կոմիսարիատից կամ զորամասից), որը հավաստում է նախկին զինծառայողի զինված ուժերում ծառայելու փաստը.

2) փաստաթուղթ զինծառայության ընթացքում բուժվելու, հիվանդության պատճառով արձակուրդում գտնվելու մասին:

114. Գերության մեջ գտնված նախկին զինծառայողների հիվանդությունների կամ վնասվածքների առկայության հետ պատճառական կապը որոշելու համար ԿՌԲՓԿ են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը՝

1) տեղեկանք զինվորական կոմիսարիատից, որտեղ նշվում են զինված ուժեր զորակոչվելու և զորացրվելու տարեթվերը, ամիսներն ու ամսաթվերը, գերության մեջ գտնվելու ժամանակահատվածը, զինվորական վերահաշվառում անցնելու տարեթիվը, ամիսն ու ամսաթիվը կամ նրա պիտանիությունը զինվորական ծառայությանը՝ զինված ուժերից զորացրվելու պահին.

2) հիվանդությունը կամ վնասվածքը հավաստող փաստաթուղթ առողջապահական կազմակերպությունից:

115. Ծառայության ընթացքում ձեռք բերած հիվանդությունների կամ ստացած վնասվածքների արդյունքում, ԿՌԲՓԿ որոշմամբ հինգ և ավելի սահմանափակում

նախատեսող հոդվածներ ունեցող ժամկետային պարտադիր ծառայության շարքային կազմի զինծառայողները ճանաչվում են պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումով՝ ծառայության հեշտացված օրվա կարգացուցակով:

116. Առողջական վիճակի պատճառով վաղաժամկետ զորացրման ենթակա, սակայն ծառայության հետ կապ չունեցող հիվանդությունների դեպքում, երբ ԿՌԲՓԿ-ի կարծիքով հիվանդությունը կարող էր հայտնաբերվել զորակոչի ընթացքում, հրավիրվում է ընդլայնված քննարկում՝ ԿԲՀ-ի համապատասխան մասնագետի, առողջապահության նախարարության ներկայացուցչի, համապատասխան զինվորական կոմիսարի և զինվորական կոմիսարիատի բժշկի, այլ պատասխանատու անձանց մասնակցությամբ: Քննարկման արդյունքների վերաբերյալ ԿՌԲՓԿ պետը զեկուցում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին:

117. ԿՌԲՓԿ-ի եզրակացությունները գրանցվում են եզրակացությունների արձանագրությունների գրանցման մատյանում և եզրակացության ձևաթերթիկում, որին կցվում են ՀՌԲՀ-ի կողմից ներկայացված եզրակացությունը, տեղեկանքները և պահպանվում 5 տարի, այնուհետև՝ ըստ կարգի հանձնվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվ: Պատճառական կապի վերաբերյալ ԿՌԲՓԿ-ի տրված եզրակացությունները գրանցվում են արձանագրությունների գրանցման մատյանում (համաձայն N 11 ձևի): Եզրակացության պատճենները, վավերացված ԿՌԲՓԿ-ի կնիքով, տրամադրվում են՝

1) փորձաքննությանը ներկայացրած մարմնին.

2) փորձաքննվողի ծառայության (աշխատանքի) վայր.

3) սպայական և ենթասպայական կազմի համար՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության՝ համապատասխան կազմերի հաշվառում իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումներ.

4) քրեական գործի վարույթն իրականացնող քննչական մարմնին (ըստ պահանջի).

5) փորձաքննվողին կամ նրա օրինական ներկայացուցչին կամ նրա կողմից լիազորված անձին (ըստ պահանջի):

118. Բժշկական հետազոտություն կամ փորձաքննություն իրականացնող մարմինները, ինչպես նաև քաղաքացու կամ զինծառայողի առողջական վիճակի վերաբերյալ սույն կարգի համաձայն տեղեկատվություն ունեցող (փաստաթղթեր ստացած) պաշտոնատար անձինք պարտավոր են օրենքով սահմանված կարգով ապահովել քաղաքացու կամ զինծառայողի առողջական վիճակի մասին հետազոտման, ախտորոշման, բուժման կամ փորձաքննության ընթացքում պարզված տեղեկությունների գաղտնիությունը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

119. Եթե պահեստազորայինը համաձայն չէ ԿՌԲՀ-ի կամ ԿՌԲՓԿ-ի եզրակացության հետ և պահանջում է վերանայել եզրակացությունը կամ կայացնել այլ եզրակացություն, ապա զինվորական կոմիսարիատը ԿՌԲՓԿ է ուղարկում նրա դիմումը, անձնական գործը, բժշկական գրքույկը և զինվորական կոմիսարիատում առկա բժշկական այլ փաստաթղթեր: ԿՌԲՓԿ-ն կարող է պահանջել դիմողի առողջական վիճակի վերաբերյալ տարբեր քաղաքացիական և զինվորական բժշկական հաստատություններում առկա այլ փաստաթղթեր, անհրաժեշտության դեպքում գործն ուղարկել վերափորձաքննության: Նրանց համար ձևակերպվում է հիվանդության եզրակացություն կամ տեղեկանք: ԿՌԲՓԿ-ն եզրակացություն է տալիս նաև հիվանդության կամ վնասվածքի պատճառական կապի վերաբերյալ: Պահեստազորի սպաները նման դեպքերում կարող են անմիջականորեն դիմել ԿՌԲՓԿ:

## 16. ՌՆ, ԻՃ ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ, ՀՎԲՄ, ԷՄԴ ՍՏԵՂԾՈՂ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆՎՈՂՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏ ԱՇԽԱՏՈՂ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՈՒ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

120. ՌՆ, ԻՃ այլ աղբյուրների, ՀՎԲՄ, ԷՄԴ ստեղծող աղբյուրների հետ աշխատելու համար ընդունվող և դրանց հետ աշխատող զինծառայողների և ծառայողների ռազմաբժշկական փորձաքննությունն անցկացնում է հոսպիտալային ՌԲՀ-ն՝ համաձայն հիվանդությունների և ֆիզիկական թերությունների ցանկի VI սյունակի, զորամասի բժշկի և հրամանատարության ներկայացուցչի պարտադիր մասնակցությամբ՝ համաձայն սույն կարգի 13-րդ կետի պահանջների:

